29 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ՀԻՆԳՇԱԲԹԻ 220 (3872)

Azg Ազգ

Բեռլինում ձերբակալվել է Իրակլի Օկրուաշվիլին

Բեռլինում ձերբակալվել է Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Իրակլի Օկրուաշվիլին: Հաղորդվում է, որ այդ խնդրանքով Բեռլինի դատախազությանն էր դիմել վրացական կողմը: Օկրուաշվիլին մեղադրվում է կաշառակերության, կազմակերպված խմբով իրականացված դրամաշորթության, փողերի լվացման, ծառայողական լիազորությունների չարաշահման եւ ծառայողական անփութության մեջ: Հիշեցնենք, որ Վրաստանի պաշտպանության նախկին նախարարն արդեն մեկ անգամ ձերբակալվել եւ ազատ էր արձակվել 6,5 միլիոն դոլար գրավի դիմաց: Նոյեմբերի 15-ին Իրակլի Օկրուաշվիլու նկատմամբ վրացական իրավապահ մարմինները հայտարարել էին հետախուզում:

Հակամարտություն Գաֆեսճյանի եւ Հայկական համագումարի միջեւ

«Ազգը» արդեն անդրադարձել է ամերիկահայ երկու կազմակերպությունների՝ «Գաֆեսճյան ընտանիք» հիմնադրամի եւ Ամերիկայի հայկական համագումարի միջեւ առկա դատական գործին: Երեկ հիմնադրամի հաղորդագրությունից հայտնի է դարձել, որ դատական հայցը այդ կառույցների միջեւ շարունակվում է: Հաղորդվում է, որ «Գաֆեսճյան» հիմնադրամը «պահանջում է դատական կարգով կասեցնել կանոնադրության եւ հիմնադիրների պայմանագրի խախտումներով թանգարանը իրականացնելու Ամերիկայի հայկական համագումարի եւ ՀՅԹՀ անպարտաճանաչ հոգաբարձուներ Հայր Հովնանյանի, Վան Գրիգորյանի եւ Անուշ Մաթեւոսյանի փորձը»: Հիշեցնենք, որ վեճի առարկան Վաշինգտոնում կառուցվելիք Հայոց ցեղասպանության թանգարանն է, որի տարածքի պատկանելության շուրջն էլ բախվել են այդ երկու կառույցների շահերը: Ըստ «Գաֆեսճյան» հիմնադրամի «նրանց (Ամերիկայի հայկական համագումարի) հայտարարած ծրագրով թանգարանի տարածքը կրճատվում է՝ սահմանափակվելով միայն եղած մեկ շինության տարածքով (նախկին բանկի շենք), եւ թանգարանը կառուցվում է մնացած տարածքի վաճառքից առաջացած եկամուտի հաշվին: Համաձայն համագումարի փաստաբանի՝ անպարտաճանաչ հոգաբարձուները հստակ նպատակ ունեին բանկի շենքի վերանորոգման համար գումարները հայթայթել հարող շենքերի վաճառքից, որը հակասում է իրենց պայմանագրային եւ օրենքով սահմանված պարտականություններին՝ որպես թանգարանի ծրագրի հոգաբարձուներ»: Հիմնադրամից հաղորդում են, որ նշված դատական հայցով փորձ է արվում արգելելու տարածքի «փոշիացումը»: Հիշեցնենք, որ դատական նմանատիպ մեկ հայց արդեն մերժվել էր դատարանի կողմից:

Նորից ծուղակը չե՞նք ընկնի

Հարցնում է նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանը

ՄԱՐԻՆԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԺՄ 17-րդ համագումարը հաստատեց արդեն հայտնին, որ ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանին նախագահի թեկնածու է առաջադրում: Համագումարին ներկա էին եւ Վ. Մանուկյանին տարբեր չափերի եւ ուղղությունների աջակցություն հայտնեցին ԱԺԿ-ն (Շավարշ Քոչարյան), ԱԺԴ-ն (Արշակ Սադոյան), ՀՅԴ-ն (Արմեն Ռուսամյան), ՕԵԿ-ը (Մհեր Շահգելդյան), «Ժառանգությունը» (Վարդան Խաչատրյան), ՍԻՄ-ը (Հրանտ Խաչատրյան), «Ազգային ոտեցությունը» (Սամվել Շահինյան), «Ազգային համաձայնությունը» (Արամ Հարությունյան):

Վազգեն Մանուկյանն իր ելույթը կառուցեց անցյալից ներկա գալով, ապա որպես նախագահի թեկնածու՝ ոտեցության իր մոդելի պատկերացման մասին խոսելով:

«Ունեցանք անկախություն, մենք հաղթեցինք Ղարաբաղյան պատերազմում, հիմքեր դրվեցին ժողովրդավարության, ազատ ձեռներեցության, բայց դրանից հետո հուսախաբություններ, հիասթափություններ, վախ ապագայի նկատմամբ. այսպիսի վիճակում ենք մենք ապրում: Եվ բոլորս ունենք մեր մեղքի բաժինը: Ով՝ ինչ չափով, ով՝ ինչ է արել, ես դատավոր չեմ, թող պատմությունը դատի», նկատելով, որ համակարգը փոխելու մեխանիզմը (ընտրությունները) չի աշխատում բացարձակապես: Ըստ նրա՝ իշխանությունը գտնվում է մի խումբ մարդկանց ձեռքում, դատական համակարգը `սպասարկող է այդ իշխող խավին, կոռուպցիան՝ վերից վար, որպես ճորտեր ապրում ենք մի ոտեցությունում, որտեղ ո՛չ քաղաքական, ո՛չ տնտեսական մրցակցություն չկա. «Եվ դրա համար ե՛ւ տնտեսության, ե՛ւ քաղաքական ասպարեզում անբան մարդիկ են վերեւ բարձրանում: Այն մարդիկ, որոնք ասելիք ունեն, բարոյականություն ունեն՝ դուրս են մնում այդ համակարգից»: Ու գերխնդիրն իշխանություններից ազատվելն է, բայց. «Կկարողանա՞նք: Եվ եթե կարողանանք՝ նույն ծուղակը չե՞նք ընկնի: Որովհետեւ միայն անձերով չի պայմանավորված այս ամենը, այլ տարիներով ձեւավորված համակարգ է»:

Ըստ Մանուկյանի՝ 98 թվին իշխանության եկածները՝ իշխանության մի հատված էին, որոնք բարդույթներ չունեին. նախորդները խոսում էին ժողովրդավարությունից՝ մտածելով, որ ժողովուրդը դրանից բան չի հասկանում, նոր եկածները խոսում էին Ղարաբաղից՝ համոզված, որ դրանից էլ ժողովուրդը բան չի հասկանում: Դրանից հետո գործել է մի մեխանիզմ, որը դրանից առաջ իշխանությունների ժամանակ եւս գործում էր, այն է. «Մենք պետք է բերենք մեր մարդկանց, հարստացնենք. բնական է, որ իրենք ղարաբաղցի էին, Ղարաբաղից էին բերում, ստեփանավանցի լինեին՝ ստեփանավանցիների կբերեին:

Տես էջ 3

Վարչապետը նույնպես դիմեց

Վարչապետ Սերժ Սարգսյանը նախագահական ընտրություններին մասնակցելու համար Հայաստանում 10 տարի մշտապես բնակվելու եւ 10 տարվա քաղաքացիություն ունենալու մասին տեղեկանքներ ստանալու համար դիմել է ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն: Հաղորդվում է, որ նույն հարցով ոստիկանությանն է դիմել նաեւ Ժողովրդական կուսակցության նախագահ Տիգրան Կարապետյանը: Ընդհանուր առմամբ, վարչություն է դիմել արդեն տասը քաղաքացի: Արդեն բավարարվել են մի քանի դիմումներ, այդ թվում՝ «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանի դիմումը: Ավելի վաղ բավարարվել էին Լեւոն Տեր-Պետրոսյանի, Իսրայել Հակոբքոխյանի եւ Արշաուս Գեղամյանի դիմումները:

Առաջին հայտը ներկայացրել է Գեղամյանը

Նոյեմբերի 28-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստացել է առաջիկա նախագահական ընտրություններում թեկնածության առաջադրման առաջին հայտը: Հաղորդվում է, որ «Ազգային միաբանություն» կուսակցության նախագահ Արշաուս Գեղամյանի թեկնածության առաջադրման անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ կուսակցության մշտապես գործող մարմնի որոշումը, հանձնաժողով է ներկայացրել թեկնածուի լիազոր ներկայացուցիչը: Հիշեցնենք, որ նախագահի 2008-ի փետրվարի 19-ի ընտրություններին թեկնածուների առաջադրման վերջնաժամկետը դեկտեմբերի 6-ի ժամը 18:00-ն է:

Արտաքիսյանները լեռնականնե՞ր

«Ազգային միաբանություն» կուսակցության տարածքային երեք կառույցների ղեկավարներ հայտարարություն են տարածել Լեւոն Տեր-Պետրոսյանին միանալու մասին: Հայտարարությունը ստորագրել են կուսակցության Գավառի, Հրազդանի եւ Երեւանի տարածքային կառույցների ղեկավարները: Ի պատասխան այդ հայտարարության «Ազգային միաբանությունը» տեղեկացնում է, որ նախորդ օրը կուսակցության նախագահությունը «խստորեն դատապարտել է Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմակիցների փորձերը շանտաժի ու կաշառքի միջոցով իրենց կողմը գրավելու սոցիալապես ծանր վիճակում հայտնված «Ազգային միաբանություն» կուսակցության որոշ անդամների: «Ազգային միաբանություն» կուսակցության լրատվական ծառայությունը լիազորված է ընդհատելու պարոն Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ իր կողմնակիցների թիմը «ուժեղացնելու» կապակցությամբ», ասված է ԱՄ տարածած հաղորդագրությունում:

Արամ Կարապետյանին մերժեցին

Հայաստանի ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչությունը հրաժարվել է Արամ Կարապետյանին տրամադրել վերջին 10 տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը: «Նոր ժամանակներ» կուսակցության նախագահը պատրաստվում է «ՀՀ ոստիկանության հակաօրինական գործելակերպը վիճարկել դատարանում եւ ԿԸՀ-ին ներկայացնել համապատասխան բոլոր փաստաթղթերը՝ որպես ՀՀ նախագահի թեկնածու գրանցվելու եւ առաջիկա ընտրություններին մասնակցելու հաստատակամությամբ», ասված է կուսակցության հաղորդագրության մեջ:

Բաց նամակներ

Տիկին Էվանսի բացահայտումները

Ինչպես մեր երեկվա համարում տեղեկացրել ենք, «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի խմբագիր եւ հրատարակիչ Հարութ Սասունյանն իր շաբաթական սյունակներից վերջինում, վերնագրված՝ «Տիկին Էվանսը բացահայտում է ինտրիգային մանրամասներ իր ամուսնու հետկանչի վերաբերյալ», մեջբերումներ է արել Հայաստանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջոն Էվանսի տիկնոջ վկայություններից այդ ժամանակվա իրենց պարտադրված ինքնազսպման եւ ապրումների մասին: Ստորեւ Սասունյանի հոդվածն ամբողջությամբ:

Էվանսների ընտանիքը

Ավելի քան երկու տարի անց այն օրվանից, երբ իր ամուսինը դարձավ Հայոց ցեղասպանությունը հրապարակայնորեն ճանաչող առաջին ամերիկացի դիվանագետը, Դոննա Էվանսը բացահայտեց մի քանի կուլիսյան մանրամասներ դեսպան Ջոն Էվանսի Հայաստանում պաշտոնավարության եւ ամերիկյան արտգործնախարարությունից նրա պարտադրված հեռացման առնչությամբ: Նա այդ մասին խոսեց նոյեմբերի 18-ին Վաշինգտոնում Հայկական դեսպանատանը Ամերիկայի հայկական համագումարի կազմակերպած տարեկան ընդունելության ընթացքում:

Տիկին Էվանսն իր խոսքն սկսեց նկարագրելով ամուսնուց ստացած հեռախոսային զանգը, որով նա հայտնում էր, որ իրեն նշանակել են Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան եւ ինքն ընդունել է այդ պաշտոնն առանց տատանվելու:

Սենատի հաստատումից հետո դեսպան Էվանսն ու կինը 2004-ի աշնանը տեղափոխվել են Հայաստան: Տիկին Էվանսը նկարագրեց այն մշտական «լարվածությունը», որով շրջապատված էին, քանի որ «պետքարտուղարության չգրված քաղաքականությունն էր, որ «ցեղասպանություն» բառը պետք է չակերտների մեջ լիներ գրավոր խոսքում, իսկ բանավորում պետք է ինչեր պարզապես որպես «g» (կամ անգլերեն «g» որպես «genocide» բառի սկզբնատառը) բառը»: Ըստ նրա, պետքարտուղարության պաշտոնյաները «հաստատ գիտեին, որ «ցեղասպանություն» բառը խիստ տաբու է»:

Այնուհետեւ նա շարունակեց. «Հայոց ցեղասպանության խնդիրը շատ զգայուն թեմա էր եւ Երեւանի դիվանագիտական շրջանակներում պետք էր խուսափել դրանից: Դեսպանների տիկնայք նույնիսկ իրենց անձնական շփումների ընթացքում չէին խոսում այդ մասին: Առաջին անգամ, երբ մեքենայով անցնում էինք Ցեղասպանության հուշահամալիրի մոտից, ամուսինս ասաց՝ դա է հուշարձանը: Ես մի արագ հայացք գցեցի սրածող կոթողին եւ շրջվելով դեպի առաջ, հայելու մեջ աչքերս հանդիպեցին վարորդի հայացքին: Ինձ այնքան անհանգիստ զգացի: Ամուսինս ասաց, որ տարին մեկ անգամ միայն մեզ թույլատրվում է այցելել այնտեղ, միայն ապրիլի 24-ին»:

Տես էջ 3

Հատուած

Ադրբեջանական հեղաշրջման փորձ Վրաստանում

Վրաստանի հակահետախուզության մարմինները պետական հեղաշրջման փորձ կատարելու մեղադրանքով ձերբակալել են Վրաստանի ադրբեջանցիների ազգային վեհաժողովի ղեկավար Դաշգին Գյուլմամեդովին: Հաղորդվում է, որ Գյուլմամեդովը նշանակվել էր Վրաստանի նախագահի պաշտոնի հավակնորդներից մեկի՝ ադրբեջանցի Ֆազիլ Ալիեւի ընտրական շտաբի ղեկավար: Անցած շաբաթ ադրբեջանական ՁԼՄ-ներին տված իր հարցազրույցներում Գյուլմամեդովը հայտնել էր, որ «վրացի իշխանավոր հանցագործները փորձում են տապալել Ֆազիլ Ալիեւի թիմի նախընտրական քարոզարշավը»:

Միլի մեջլիսը հետաձգել է Թուրքիայի խորհրդարանի նախագահի այցը Ադրբեջան

Երեկ այդ մասին, հենվելով «Ձիհան» գործակալության հաղորդագրության վրա, տեղեկացրել է թուրքական «Զաման» թերթը: Խոսքը Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահ Քյոքսալ Թոփթանի այցի մասին է, որի իրականացումը նախատեսվում էր նոյեմբերի 28-30-ը: Ըստ «Զամանի», այցի հետաձգման մասին հայտարարելիս Ադրբեջանի Միլի մեջլիսը որեւէ բացատրություն չի տվել դրա պատճառների մասին, ոչ էլ իրազեկել է, թե որքան ժամանակով է հետաձգվում Թոփթանի այցը: Հատկանշական է, որ այցի հետաձգման հայտարարությունը Բաքվում հենց դրա նախօրյակին էր արվել:

Հ. Ղ.

Ինչպիսի՞ն է Հայաստանից արտերկիր մեկնող հայ միգրանտի կերպարը

2002-ից ի վեր արտագաղթի տեմպերը չեն նվազում

2002-ից մինչ այսօր ափսասանային միգրացիայի (արտագաղթի) տեմպերը Հայաստանում չեն նվազել, ավելին՝ դեռ կա ափսասանային միգրացիայի աճ, մոտ 0,2 տոկոսով:

Երեկ «Անի» հյուրանոցում ներկայացվեց Հայաստանից արտերկիր մեկնող հայ միգրանտի եւ առհասարակ 2005-2007 թվականների ափսասանային միգրացիայի վերաբերյալ ԵԱՀԿ աջակցությամբ «Առաջատար սոցիալական տեխնոլոգիաներ» հասարակական կազմակերպության հետազոտությունը:

2005-2007 թվականների ժամանակաշրջանում արված հետազոտության համար ընտրվել են 1500 տնային տնտեսություններ եւ հարցում ափսասանային միգրանտներ: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ 2005-2007 թվականների ժամանակահատվածում ափսասանային միգրացիայի գործընթացում ներգրավված է եղել հարցված ընտանիքների 14,5 տոկոսը: 2005-ի նման այս անգամ էլ դեռեւ ճնշող մեծամասնությունում ընտանիքի մեկ անդամն է մեկնել արտասահման ափսասելու, 15,5 տոկոսի դեպքում ընտանիքից երկու միգրանտ է եղել արտերկրում ափսասող, իսկ մոտ երկու տոկոս դեպքերում՝ 3 միգրանտ: Ափսասելու նպատակով 2005-ին Հայաստանից արտերկիր է մեկնել 54 հազարից 74 հազար միգրանտ, 2006-ին՝ 60 հազարից 81 հազար միգրանտ: Ի դեպ, միգրանտների 30 տոկոսը մինչեւ 2007-ի հունվար չի վերադարձել Հայաստան: «Առաջատար սոցիալական տեխնոլոգիաներ» (ԱՍՏ) ՀԿ նախագահ **Աննա Մինասյանի** խոսքով, 2002-ից մինչեւ հիմա միգրացիայի տեմպերում աճը եղել է 0,2 տոկոս, ինչը հիմնավոր տվյալ չէ պնդելու, թե միգրացիայի տեմպերի արագ աճ կա: Հետազոտության հեղինակները ափսասանային միգրացիայի 2007-ի հարցմամբ երկու տարբերություն են արձանագրել 2002-2004 եւ 2005-5006-ի միգրացիոն հոսքերի միջեւ: Նախ՝ արտագաղթում ավելացել է գյուղական համայնքների բնակչության ներգրավվածությունը, որին զուգահեռ արտագաղթողների մեջ կրճատվել է երեւանաբնակների քանակը:



Ովքե՞ր են մեկնում արտերկիր՝ ափսասելու: Ըստ հետազոտության, ափսասանային միգրացիայի են դիմում միջին խավի մարդիկ. հարուստներին դրսի ափսասանին անհրաժեշտ չէ, իսկ աղքատներին էլ հասանելի չէ: 2005-2006-ի հայ միգրանտի տիպիկ կերպարը, ԱՍՏ ՀԿ նախագահի ներկայացմամբ, հիմնականում ունի հետեւյալ բնորոշումները՝ ամուսնացած է, տնային տնտեսության՝ տան գլխավորն է կամ նրա որդին, ունի միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն: Ափսասանի համար առավել նախընտրելի երկիրը արտագաղթածների 93 տոկոսի ընտրությամբ Ռուսաստանն է, մնացյալ 7 տոկոսում երկրորդ տեղում են ԱՄՆ-ը, Ուկրաինան:

Արտերկիր մեկնողների 65 տոկոսը ափսասանի է մեկնում միջնորդավորված, բարեկամների, ընկերների կամ գործակալությունների հրավերով: Վերջին երկու տարիներին ավելացել է դրսում ափսասող հայերի տարեկան եկամուտը (ամիսը 643 դոլար), բայց դոլարի ներկայիս հոգեվարքի պայմաններում դա չի բարելավի նրանց ընտանիքների կենսամակարդակը: Ինչ վերաբերում է հայ միգրանտների վաստակի փոխանցմանը, ապա 60 տոկոս դեպքերում գումարները բանկերի միջոցով են փոխանցվում: Նախորդ տարիների համեմատ փաստորեն նվազել են մասնավոր անձանց միջոցով գումար փոխանցելու դեպքերը եւ աճել է վստահությունը բանկերի նկատմամբ:

Հետազոտության տվյալներով, արտերկրում հայերը հիմնականում ափսասում են շինարարության ոլորտում՝ օրական միջինը 10 ժամ տեւողությամբ: Միգրանտների 54 տոկոսը ընդհանրապես չի ունենում հանգստյան օրեր, իսկ գործատուի հետ պայմանագիր կնքելու պրակտիկան ցածր մակարդակի վրա է: Ափսասողների միայն 12 տոկոսն է գործատուի հետ պայմանագիր կնքում, մյուսները գործատուին չներգրավելու կամ որոշ հարցերում չտուժելու համար չեն էլ հիշում ափսասանային պայմանագրի մասին:

ՀԿ նախագահ Աննա Մինասյանի կարծիքով, բազմաթիվ խնդիրներ կան միգրացիան՝ ափսասանային արտագաղթը օրինականացնելու համար: Սակայն խնդրի օրինականացումը հնարավոր չէ միայն իրավական կարգավորմամբ. խանգարում է նաեւ ազգային մենթալիտետը, երբ որոշ հարցերից ելնելով պայմանագիր չեն կնքում, ափսասանային պայմաններից չեն բողոքում:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Արեւելահայերեն սովորելու դժվարություն անգլիախոսներն այլեւս չեն ունենա

Երեւանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել Կանադայի Մըրգիլ համալսարանի օտար լեզուների բաժանմունքի վարիչ, գերմանագետ, պրոֆեսոր **Դորա Սաֆայանի «Արեւելահայերենը անգլիախոս ափսարհի համար»** դասագիրքը, որի շնորհանդեսը տեղի ունեցավ երեկ՝ համալսարանի գիտական խորհրդի նիստերի դահլիճում: Թե ինչո՞ւ գիրքը ծնվեց Կանադայում ու հրատարակվեց Հայաստանում հարցի պատասխանը բավականին տարողունակ է, որովհետեւ Մոնրեալում բնակություն հաստատելուց առաջ Դորա Սաֆայանը երկար տարիներ գերմաներեն է դասավանդել Երեւանի պետական համալսարանում, շուրջ 10 տարի եղել է օտար լեզուների ամբիոնի վարիչը, խմբագրել ու հրատարակել է գերմաներենի դասագրքեր, ձեռնարկներ:

Մըրգիլ համալսարանում հաստատվելուց հետո գերմանագիտությանը զուգահեռ Սաֆայանն զբաղվել է հայագիտությամբ ոչ միայն մայրենիից կարոտը հագեցնելու, այլեւ հայոց լեզվի հանդեպ օտարների հետաքրքրությունը բավարարելու ձգտումով: 1981-ին հիմնում է հայերենի դասընթացներ, սակայն դասավանդելու ընթացքում ձեռքի տակ եղած արեւմտահայերենի դասագրքերը ուսումնասիրելով համոզվում է, որ դրանք լի են կցկտուր, անկապ նախադասություններով, որեւէ համակարգի չենթարկվող քերականական նյութերով, կարճ տեքստերով ու ցաքուցրիվ բառերով: Դասավանդման իր նախընտրած մեթոդների պահանջով յուրաքանչյուր դասի համար պատրաստում է թերթիկներ, որոնք սովարանալով դառնում են գրքույկներ, հետո վերածվում դասագրքի՝ «Արեւմտահայերենը անգլիախոս ափսարհի համար» վերնագրով, որը հրատարակվում է Մոնրեալում 2000 թվականին:

«Գերազանց գրախոսականները տեսնելով հասկացա, որ բոլոր նախադրյալները կան Հայաստանի Հանրապետության պետական լեզվի՝ արեւելահայերենի դասագիրքը անգլիախոս ափսարհին ներկայացնելու համար: Արեւելահայերենն առաջին անգամ մատուցվելու էր ոչ որպես մայրենի, այլ օտար լեզու: Հայագիտական նախորդ ափսասանքներիս շնորհիվ ծանոթ էի արեւելահայերենի վերաբերյալ եղած գրականությանը: Սկսեցի մեծ թափով ափսասել եւ անմիջապես հասկացա, որ դա շատ ավելի լուրջ եւ բազմաշերտ ափսասանք է, ավելի մեծ ուժ ու կորով պահանջող: Որքան խոր մխրճվեցի գործի մեջ, այնքան ավելի ոգեւորվեցի այն մտքից, որ այս տարբերակի հաջողությունն ապահովված է: Եվ ահա այսօր, արեւմտահայերեն քոյր-գրքի հրատարակումից ուղիղ յոթուկես տարի անց սեղանին եմ դնում իմ կյանքի գիրքը, նվիրված իմ 55 տարվա գիտամանկավարժական ափսասանքի փորձով ու մեծամասնաբար հայոց լեզվի հանդեպ հոգուս մեջ եղած ամբողջ սիրով», իր ելույթում ասաց Դորա Սաֆայանը, երախտագիտություն հայտնելով բոլոր նրանց, ովքեր գրքի ստեղծման ափսասանքի հանդեպ դրսեւորել են ջերմ ու հոգատար վերաբերմունք՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանին, հայոց լեզվի ամբիոնի վարիչ Լետն Եզեկյանին, լեզվաբան Սերգեյ Գալստյանին, պրոֆ. Սամվել Մուրադյանին, Հրաչյա Միրզոյանին եւ այլոց: Գիրքը ձեւավորել եւ էջադրել է Մարո Մանավյանը, որը Դորա Սաֆայանի կողքին է եղել թե՛ Կանադայում, թե՛ Հայաստանում: «Երբ գանգատվում էի հոգնածությունից, Մարոն ասում էր. «Ի՞հարկե հոգնած ես, չէ՞ որ երկունքի մեջ ես»:

Դասագրքի նշանակության եւ արժեքության մասին խոսեցին Արամ Սիմոնյանը, Սերգեյ Գալստյանը, Դավիթ Գյուրզադյանը, իսկ Լիլիթ Այվազյանը (Նիկոլ Աղբալյանի անվ. թիվ 19 դպրոցի աշակերտուհի) ընթերցեց Սիլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը՝ Դորա Սաֆայանի անգլերեն թարգմանությամբ:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Վթար

Լավատեղյակ աղբյուրից տեղեկացանք, որ երեկ, նոյեմբերի 28-ին, Երեւան-Էջմիածին խճուղու վրա ավտոմեքենայով վթարի է ենթարկվել Հայ եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Թորգոմ վրդ. Տոնիկյանը: Ծանր վիճակում նրան տեղափոխել են «Էրեբունի» հիվանդանոց:

Առայժմ ենք մաղթում հոգեշնորհ հայր սուրբին:

«Կոնվերս բանկի» նոր մասնաճյուղերից առաջինը Աբովյանում

Երեկ Աբովյան քաղաքում նոր մասնաճյուղի բացմամբ փաստորեն մեկնարկեց «Կոնվերս բանկի» «Մինչեւ տարեվերջ 6 նոր մասնաճյուղ» ծրագիրը:

Բանկի ավտոմատացված սպասարկման համակարգը հնարավորություն է տալիս ունենալու տվյալների միասնական բազա on-line կարգի միջոցով, որը հնարավորություն կընձեռի «Աբովյան» մասնաճյուղի հաճախորդներին, անհրաժեշտության դեպքում, գործարք կատարել, օգտագործելով գլխամասային գրասենյակի հնարավորությունները: «Աբովյան» մասնաճյուղի բացման կապակցությամբ նոյեմբերի 28-ից մինչեւ դեկտեմբերի 28-ը մասնաճյուղում ընթացիկ հաշիվ բացող իրավաբանական անձանցից չի գանձվի հաշվի նվազագույն մնացորդ, իսկ ֆիզիկական անձանց նվեր կտրվի VISA ELECTRON պլաստիկ քարտ՝ 3000 դրամ մնացորդով:

Ինչ վերաբերում է առաջիկա ամսվա ընթացքում բացվելիք եւս 5 նոր մասնաճյուղերին, ապա դրանցից 2-ը կլինեն Երեւանում՝ «Կասկադ» եւ «Նոր Նորք», 3-ը՝ մարզերում՝ «Էջմիածին», «Իջեւան», «Կումայրի»: Փաստորեն տարեվերջին «Կոնվերս բանկի» մասնաճյուղերի ընդհանուր թիվը կհասնի 23-ի:

Ա. Մ.

Օրենքները համապատասխանեցվում են սահմանադրությանը

ԼՂՀ խորհրդարանում այստեղ ոչ թե ձեռք բարձրացնելու, այլ էլեկտրոնային լուսաստվարակի միջոցով են քվեարկելու: Համենայն դեպս, երեկվա լիագումար նիստում պատգամավորներն արդեն օգտվում էին էլեկտրոնային կոճակներից:

Բայց դա միակ ուշագրավը չէր երեկվա նիստում: ԼՂՀ օրենքները սահմանադրությանը համապատասխանեցնելու, մասնավորապես, «ԼՂՀ կառավարության կառուցվածքի մասին», «Վերահսկիչ պալատի մասին» եւ «Դատախազության մասին» օրենքները պետք է մինչեւ 2008 թվականի հունվարի 1-ը համապատասխան փոփոխության ենթարկվեն, սակայն երեկվա նիստում օրենքի տեսքով ընդունվեց միայն «Դատախազության մասին» օրենքը, իսկ մյուս երկու օրենքներն ընդունվեցին առաջին ընթերցմամբ: Ինչպես նշեց ԱԺ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Յուրի Հայրապետյանը, առաջիկա երկու շաբաթների ընթացքում կքննարկվեն հիշյալ օրենքներում առկա չիսպառկեցված դրույթները, եւ հավանական է՝ հաջորդ նիստում, որը տեղի կունենա դեկտեմբերին, վերջնական տեսքով դրանք օրենքի ուժ կստանան:

Կառավարության կառուցվածքը օրենքով սահմանելը սահմանադրական պահանջ է, մինչ այդ գործադիր մարմնի կառուցվածքը ձեւավորում էր հանրապետության նախագահը: Իսկ ԱԺ վերահսկիչ պալատը պետք է դառնա անկախ կառույց: Ովքե՞ր կնշանակվեն ՎՊ նախագահի եւ հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնում. հայտնի կդառնա մինչեւ տարեվերջ:

Նիստում, ի թիվս շուրջ մեկ տասնյակ օրինագծերի, որոնց մի մասն առանձին օրենքներ էին, խորհրդարանը քննարկեց նաեւ պատգամավոր Հովիկ Ջիվանյանի պատգամավորական լիազորությունները դադարեցնելու հարցը: Վերջին երեք ամսում դա արդեն պատգամավորական մանդատի լիազորությունները դադարեցնելու երրորդ դեպքն է: Ընդ որում, մանդատից հրաժարվելը բոլոր երեք դեպքերում պայմանավորված պատգամավորների՝ այլ ափսասանի անցնելու կամայությամբ: Հովիկ Ջիվանյանի խորհրդարանից հեռանալը կապված էր կառավարությունում այլ ափսասանի անցնելու հետ: Բացառելի չէ, որ առաջիկայում պատգամավորների թվից այլ նշանակում էլ կլինի կարեւորագույն պաշտոններում: Այդ թեման եւս արծարծվում է կուլիսների հետեւում, սակայն միայն ենթադրությունների շրջանակում:

ԿԻՄ ՀԱԲԻԹԵԼԵՆ
Սեղիսանակեր

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԶ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@armince.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հասցեագրություն (գրաքաղ) / հեռ 582960

Լուսագրների սենյակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ 582483

Շուրջօրյա լուսանկար ծառայություն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԼՂՀ նախագահի խորհրդականը առաջադրվում է ՀՀ նախագահի թեկնածու

«ԼՂՀ-ն շահարկման առարկա լինել չի կարող»

Երեկ «Ուրբաթ» ակումբում հյուրընկալված ԼՂՀ նախագահի խորհրդական **Արման Մելիքյանը** լրագրողներին տեղեկացրեց, որ հրաժարական է ներկայացրել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին՝ առաջադրելու իր թեկնածությունը ՀՀ նախագահական ընտրություններում:

Անդրադառնալով Հայաստանի ներքաղաքական կյանքում Ղարաբաղի հարցի շահարկմանը՝ Արման Մելիքյանն ասաց, որ Ղարաբաղի խնդրի ծանրության կենտրոնը տեղափոխվել է Հայաստան եւ Ղարաբաղի խնդրի ճակատագիրը կախված է նրանից, թե ինչպես կանցնեն ընտրությունները Հայաստանում եւ ով կընտրվի Հայաստանի նախագահ:

«Մարտավարությունը, որ ընտրել են մրցակից կողմերը, կարող է հանգեցնել քաղաքացիական լուրջ դիմակայության, ինչպես նաեւ բախումների: Ահա այսպիսի վտանգ տեսնելով է պայմանավորված իմ նախագահական թեկնածությունն առաջադրելը՝ կանխելու այդ վտանգը: Հայաստանում ձեւավորված երկու հիմնական բեւեռները՝ հանրապետական եւ ՀՀՇ-ական կուսակցությունները, ժողովրդին լուրջ երկընտրանքի առաջ են բերել: Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ իր շուրջը համախմբած ՀՀՇ անդամները առաջարկում են վերացնել կոռուպցիան հարցում այդ թիմը մնացել է 97-ի դիրքերում՝ պատրաստ է հանձնել Լեռնային Ղարաբաղի տարածքները, որոնք նախկին ԼՂԻՄ-ի եւ հետո ԼՂՀ-ի հռչակած սահմաններից դուրս են: Հանրապետական թիմը չտալով երաշխիքներ, որ այդ տարածքները չեն հանձնվում, նաեւ մերժում է Հայաստանում կոռուպցիայի կառավարման համակարգի գոյության փաստը: Ըստ էության, ժողովուրդը որ կողմին էլ տա իր ձայնը, վաս վիճակում է հայտնվելու», նկատեց Արման Մելիքյանը:

Մելիքյանը համոզված է, որ ժողովուրդը ձայները տալով Տեր-Պետրոսյանին՝ պետք է հանձայնի տարածքների կորուստ հետ: Իսկ Սերժ Սարգսյանի թիմն էլ Հայաստանում կոռուպցիայի համակարգը թողնելու է նույնը:

Եվ այդ երկու ուժերի դիմակայությունից շատ լուրջ սեղմ է խրվել Հայաստան-Ղարաբաղ փոխհարաբերություններում. ղարաբաղցի բառը Հայաստանում դարձել է թշնամի բոլոր հարցերում:

«Կոռուպցիայի համակարգը վերացնելու համար պետք չէ հանձնել համար այսօր ատոմահաղորդական նախադրյալներ գոյություն չունեն», հավելեց Մելիքյանը:

Հարցին, թե ինչ շանսեր ունի Մելիքյանը՝ թեկնածությունը դնելով նախագահական ընտրություններում, վերջինս այսպես պատասխանեց. «Ես առհասարակ թեկնածու չեի ուզում լինել, ուղղակի այլ տարբերակ չգտա: Ես առաջարկում եմ նոր մոտեցումներ թե՛ բանակցային գործընթացում, թե՛ մեր կառավարման հանձակարգում համապատասխան վերափոխումներ կատարելու առումով: Մենք պարտավոր ենք անել ամեն ինչ, որ Ղարաբաղը բանակցություններում հանդես գա որպես ինքնուրույն կողմ: Հայաստանը երբեք չպետք է խոսի տարածքներ հանձնելու մասին: Հայաստանը կարող է խոսել միայն փախստականների, փախստականներով այդ տարածքները բնակեցնելու մասին: Հայաստանը հրապարակով պետք է հայտարարի, որ ուժի մեջ չէ այլեւս 89-ի ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու որոշումը: Այդ որոշումը բացարձակապես հաշվի չի առնում այսօրվա տարածքային իրողությունները եւ հետպատերազմյան իրողությունները: Դա նաեւ հնարավորություն կտա Հայաստանին վաղը շատ հանգիստ ճանաչելու Ղարաբաղը այն սահմաններում, որում այսօր գոյություն ունի: Սակայն իմ մոտեցումներից մի քանիսն են»:

Վերջում Մելիքյանը հիշեցման կարգով անդրադարձավ անցած տարվա խորհրդարանական ընտրությունների նախաշեմին տեղի ունեցած Արարատ Զուրաբյանի եւ Շավարշ Քոչարյանի հեռուստաբանավեճին, որտեղ Արարատ Զուրաբյանին հարցրել են պատրաստ եք հանձնելու տարածքները, վերջինս էլ պատասխանել է՝ այո:

Հարցին՝ չէ՞ որ Սերժ Սարգսյանն էլ է ասում, որ Աղդամը մեր հայրենիքի չէ, Մելիքյանը պատասխանեց. «Սերժ Սարգսյանն էլ այդ առումով ճիշտ չէ: Միակ տարբերությունն այն է, որ Վազգեն Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը եւ նրա թիմակիցները 98-ին կանխեցին այդ հանձնման գործընթացը: Հայաստանը միավորել էր իրեն ԼՂԻՄ-ին, ոչ ԼՂՀ-ին հին սահմաններով՝ առավել եւս նոր սահմաններով: ԼՂՀ-ն որպես Հայաստանի մաս՝ Հայաստանը չդիտարկեց»:

ՆԱՐԻՊ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Նորից ծուղակը չեՂք ընկնի

1-ին էջից

Հայաստանում առաջացավ մի սարսափելի վիճակ. մի ազգ, որը միշտ միասնական է եղել, մի ազգ, որ հաղթել է ղարաբաղյան պատերազմում, հանկարծ՝ հայաստանցի-ղարաբաղցի բանաձեւը»: Մի խոսքով՝ Մանուկյանն ուզում է ոչ թե սոսկ մարդկանց փոխել, այլ՝ համակարգը. «Մենք չենք կարող սանց փոխելով պետությունը դարձնել ավելի լավը»:

Ըստ Մանուկյանի՝ ամենամեծ փոխող ուժը ժողովրդի մտքի մեջ դրված դրմինանտ գաղափարներն են՝ ազատությունը եւ հայ լինելը՝ թիմի անդամ զգալը. «Երբ հրաժարվում ենք ազգայինից, չի ափսոսում ազատության գաղափարը, հրաժարվում ենք ազատությունից, չի ափսոսում ազգայինը»:

ԱԺՄ նախագահը շեշտեց, թե երբեք ընտրությունների համար այսքան կարեւոր նշանակություն չի ունեցել Ղարաբաղի հարցը, ինչպես հիմա: Եվ ներկայացրեց իր պատկերացումները Ղարաբաղի հարցի վերաբերյալ: Շատ վտանգավոր է ասել՝ Ղարաբաղը տանք, բայց հանգիստ ապրենք: «Չեք ապրելու հանգիստ»: Եվ մյուս տեսակետը՝ «Ոչ մեկին ոչ մի թիզ հող՝ քաղաքականությունն այդպես չի արվում»: Բայց. «Եթե վտանգվի Ղարաբաղի անկախությունը՝ կորցնելու ենք Զանգեզուրը, կորցնելու ենք Հայաստանը, ինքնավստահությունը, հավատն ապագայի նկատմամբ: Գնում են բանակցություններ՝ ինչո՞ւ արդյունք չեն բերում: Առաջին «մեղավորը» Ադրբեջանն է, քանի որ մտածում է, թե ժամանակն ափսոսում է իր օգտին եւ նրա կողմից միայն ամբողջությամբ զիջելու հարցն է: Հայաստանը պետք է լինի ազատ-ժողովրդավարական երկիր, դրա տվեք հայերին ազատություն, ու կտեսնեք՝ զարգացում կգնա բոլոր ասպարեզներում: Մինչեւ ժամանակը մենք չափսոսեցինք մեր օգտին, ոչ մի բանակցություն Ադրբեջանի կողմից իրական չի լինելու: Լինելու է խաբեություն», ասաց նա՝ այդպիսով ուղերձներ անելով թե՛ իշխանությանը, թե՛ ՀՀՇ-ի լիդերին:

Վերադառնալով այն մոդելին, որ ԱԺՄ-ն ուզում է իրականացնել, Վազգեն Մանուկյանը նկատեց, որ մեկ անձ կամ մեկ կուսակցություն այդ մոդելը չի կարող իրականացնել. «Ես կոչ չեմ անում՝ եկեք հավաքվեք իմ շուրջը: Ես կոչ եմ անում՝ եկեք հավաքվեք գաղափարների շուրջը»: Ըստ նրա՝ շատերն են կիսում իրենց գաղափարները՝ ՀՅԴ-ի, ՕԵԿ-ի հետ ճանապարհ են անցել, չի հասկանում, թե «ժառանգության» մոտեցումներն ինչո՞վ են տարբերվում ԱԺՄ-ի մոտեցումներից: Եվ հուսով էր, թե նորմալ ընտրություններ ապահովելու համար կարող են համագործակցել ընտրական հանձնաժողովներում տեղեր ունեցող ՀՅԴ-ի, «ժառանգության», ՕԵԿ-ի հետ: Իսկ արդեն նոր ընտրված ՀՀ նախագահի լիազորությունները բավարար են գոյություն ունեցող կլանները ճանդելու, բիզնեսում խոչընդոտները բացառելու, հարկային եւ մաքսային բեռի արդար բաշխման համար: Իսկ համակարգը փոխելու համար նախ պետք է փոխել սահմանադրությունը (նախորդ երկուսն, ըստ նրա, կեղծված են), կառավարման ձեւը պետք է խորհրդարանական լինի, իրական անկախ պետք է լինեն դատարանները, ընտրվի՝ մարզպետները, կուսակցությունները պետք է զարգանան: Այս բոլորը 2-3 տարում անելուց հետո նախագահը կարող է նոր, նորմալ ընտրություններ նշանակել:

ՀՅԴ-ի ԳՄ ներկայացուցիչ **Արմեն Ռուսամյանը** Վազգեն Մանուկյանին անվանեց բոլորի կողմից հարգված, որի դիրքորոշումը հենված է գաղափարների վրա: ՀՅԴ-ն սեփական թեկնածուով է հանդես գալիս՝ ընտրությունների կանխորոշվածությունը վերացնելու, ընտրություններն իրական դարձնելու համար, իսկ ընտրությունների վերահսկողությունն իրականացնելու համար լայն ճակատ պետք է ստեղծվի: Դաշնակցությունն էլ պատրաստ է իր լուման, ոնտրը ներդնելու, որպեսզի «միավորումը արժեքային, գաղափարական առումով ձեւավորվի»: «Ժառանգության» քաղաքական քարտուղար **Վարդան Խաչատրյանի** խոսքն առավել ընդհանրական էր. «Առաջադ նախագահը պետք է սիրված լինի ժողովրդի կողմից եւ ոչ թե հակադրության մեջ՝ ժողովրդի հետ»: Սա հավասարապես կարող էր վերաբերել թե՛ Վ. Մանուկյանին, թե՛ իր կուսակցության նախագահին: Նույն ոճի էին ՕԵԿ-ից **Մհեր Շահգելդյանի**, «Նոր ժամանակներ» կուսակցության փոխնախագահ Հրայր Սարգսյանի ելույթները՝ արդար ընտրությունների, այդ ուղղությամբ ջանքեր գործադրելու ուղերձներով:

Կձեւավորվի՞ Վազգեն Մանուկյանի շուրջը ընդդիմադիր բեւեռ՝ դեռ ներկաների ելույթներից տեսնելի չէր:

Կարեւորը՝ «դժվար գործը՝ առաջադրումը եղավ, երկրորդ մասը՝ նախագահ դառնալը Հայաստանում ամենահեշտն է». այսպես կատակեց Վ. Մանուկյանը երեւի անցյալի իր դառը փորձը հիշելով:

Այսօր

◆Ժամը 11.00-ին Քաղաքացիական ազգային նախաձեռնության գրասենյակում՝ ճնշարկում Թեղուտի խնդիրների մասին:

◆Ժամը 12.00-ին վճռաբեկ դատարանում կընթերցվի «Ռոյալ Արմենիա» ընկերության դատավճիռը:

◆Նույն ժամին «Հայացք» ակումբում ասուլիս կտա Ալ. Մանասյանը:

◆Ժամը 12.00-ին «Ազդակ» ակումբի հյուրն է Իսրայել Հակոբկոխյանը:

◆Մեկ ժամ անց «Արմենիա» հյուրանոցի «Սաքենիկ թագուհի» սրահում կկազմակերպվի Արամ Կարապետյանի մամուլի ասուլիսը:

◆Ժամը 14.00-ին «Անի» հյուրանոցում Աժ սոցիալական, առողջապահության եւ բնապահպանական ու գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովները անցկացնում են ճնշարկում՝ երիտասարդների եւ դեռահասների առողջության մասին:

◆Ժամը 14.00-ին ԳԱԱ-ում տեղի կունենա Ազգային գրադարանի 175-ամյակի միջոցառում:

◆Մեկ ժամ անց Լուսավորիչների կովկասյան ինստիտուտը կազմակերպում է կլոր սեղան «Թուրքիան նախագահական ընտրություններից հետո» թեմայով:

◆Ժամը 15.00-ին Կամերային երաժշտության տանը տեղի կունենա Հրայր Սարուխանի 60-ամյակին նվիրված միջոցառում:

◆Նույն ժամին ՄԱԿ-ի գրասենյակում տեղի կունենա նվերների հանձնում եւ հանդիպում տասը հայ երեխաների հետ, ովքեր այս տարի հայտարարված երեխաների նկարների միջազգային մրցույթի հաղթողներ են ճանաչվել:

◆20:00 -ին «Մոսկվա» կինոթատրոնում տեղի կունենա մոսկվաբնակ կինոռեժիսոր Գրիգոր Գլադուլյանի «Ուտը եւ Սեմը» ֆիլմի պրեմիերան: Գլխավոր դերերում՝ Արմեն Ջիգարխանյան, Ալեքսանդր Կալյագին եւ այլք:

Տիկին Էվանսի ...

1-ին էջից

Դեսպան Էվանսի շուրջը ծագած խնդիրներն սկսեցին 2005-ի սկզբներին Մ. Նահանգների հայկական համայնքներ կատարած երթագայության ընթացքում: Կալիֆոռնիա հասնելիս «ամուսինս ինձ հայտնեց, որ օգտագործելու է «ցեղասպանություն» բառը», ասաց տիկին Էվանսը, շարունակելով իր բացահայտումները, եւ որ «այդ արարքը կարող է իրեն զրկել իր պաշտոնից»: Նա պատմեց, որ սկզբում ապշել էր այդ հայտարարությունից, բայց «հետո ես ինձ շատ հպարտ զգացի: Մտածում էի, որ ճշմարտությունն ասելուց հետո նրան հավանաբար նկատողություն կանեին եւ որոշ ժամանակ «լուսանցքային» կարգավիճակում կտրեին, բայց արդեն խասանքից զրկվելը, ենթադրում էի, վատթարագույն սցենարը կլիներ»:

Առաջին անգամ «ցեղասպանություն» բառը հրապարակայնորեն օգտագործելուց հետո տիկին Էվանսը զարմացած էր մնացել, որ ամերիկահայ մամուլը չէր շտապել հրապարակել եղելությունը: «Նրանք կարծես պաշտպանում էին դեսպանին», ասաց նա: Հետագայում ANC-ի մամուլի հաղորդագրությունից պարզ դարձավ, որ դեսպան Էվանսն իրոք օգտագործել էր «Հայոց ցեղասպանություն» բառերը Բարկլեյում իր բանախոսության ընթացքում:

Տիկին Էվանսն ասաց, որ դրանից հետո ամուսինը «Վաշինգտոն գնաց հաշվետու լինելու պետքարտուղարությանը: Հակազդեցությունը տիպիկ էր», որի պատճառով էլ ինքը «վշտացել էր»: Բայց դեսպանը չգիտեր տակավին, թե արդյոք «իր հետկանչի հրամանը սեղանին կլինի, երբ վերադառնա երեւան: Ես էլ չգիտեի, կվերադառնա՞ն երեւան, թե՞ ոչ»:

Տիկին Էվանսը խստագույն խոսքերով բնութագրեց պետքարտուղարությանը Թուրքիայի ճնշումների տակ կքելու համար:

«Հնարավոր չէր պատկերացնել, որ Թուրքիայի դեսպանն ու թուրքական կառավարությունը այնքան ուժ ունեին, որ պարտադրեին պետքարտուղարությանը հետ կանչել իր դեսպանին», ասաց նա:.

Կամավոր հրաժարական տալը հարցից դուրս էր: «Ամուսինս հանցանք չէր գործել: Նա պարզապես ընդունել էր, որ կատարվել է հանցագործություն»:

Երեւան վերադառնալով, ըստ տիկին Էվանսի, ամուսինը շարունակել է իր դիվանագիտական աշխատանքները «սովորականի նման», բայց ամեն առավոտ գրասենյակ է մուտք գործել ակնկալելով այնտեղ գտնել իր հետկանչի պատճառական հեռագիրը կամ էլեկտրոնային նամակը: «Վերջապես 2005-ի հուլիսի 2-ին սարսափելի հեռախոսազանգը հնչեց: Պետքարտուղարությունից Դեն Ֆրիդը հաղորդեց, որ 2006-ի ամառվանից ամուսնուս պաշտոնը թափուր է հայտարարելու եւ որ մեզ կարող էին որեւէ ժամանակ հետ կանչել»:

Տիկին Էվանսն ասաց, որ ինքը «զայրացել էր», հատկապես որովհետեւ հեռախոսազանգը «հուլիսի 4-ի՝ անկախության տոնի» նախօրեին էր հնչել եւ հարվածում էր մի ձեռնհաս դիվանագետի, որը հավատարմորեն ծառայել էր կառավարությանը 35 երկար տարիներ:

Այդ տիկին Էվանսը հայտնեց, որ ինքն անձնական նամակ է հղել առաջին տիկնոջը, հավատալով «կնոջ ազդեցության ուժին», բայց այդպես էլ երբեք պատասխան չի ստացել նրանից:

«Ճնշվածությունը մեծ էր: Թերթերն սկսեցին տարբեր մեկնաբանություններ անել: Ոմանք հերոս անվանեցին ամուսնուս, ուրիշները՝ ոչ: Ամուսինս իրեն ուղղված հարցերին պատասխանում էր, որ «ինքը ծառայում է նախագահին»: Ամեն անգամ այդ բառերը լսելուց ես մի փոքր ավելի էի մահանում», հայտարարեց տիկին Էվանսը, ավելացնելով, որ այդ ամբողջ տագնապալի օրերին «դիվանագիտական հասարակությունը նեցուկ էր կանգնում ամուսնուս, անձնական հողի վրա»: Ապա նա 2006-ի ապրիլի 24-ը նկարագրեց որպես «անմոռանալի օր» իր կյանքում: Այդ օրը հազարավոր հայեր դեղին ժապավեններ էին կապում ցանկապատին դեպի ցեղասպանության հուշահամալիր իրենց ճամփին, ի պատվություն իր ամուսնուն: «Ինչպես էր այդ բոլորը կազմակերպված: Կցանկանայի առանձին-առանձին բոլորին գրկել ու համբուրել: Դա մեզ ոգեւորեց ու գոտեմարտեց», ասաց տիկին Էվանսը:

Մնացածը պատմություն է, ինչպես ասում են: Դեսպան Էվանսի փոխարեն նշանակվեց Ռիչարդ Հոգլանդը, որն այդպես էլ երբեք հայասան չհասավ: Իսկ երբ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնախումբը ճանաչեց հայոց ցեղասպանության բանաձեւը, «դա մեզ համար ամենաբարձրակետ օրն էր», խոստովանեց տիկին Էվանսը, բայց նշեց միաժամանակ, որ «խիստ զայրացած էր», երբ ամուսինը նրան ցույց է տվել 8 նախկին պետքարտուղարների նամակը, որտեղ նրանք հակառակվում էին բանաձեւին: «Ես նրանց կասեի «ամոթ ձեզ», որ թուրքական քարոզչության գործիքն եք դարձել: Ձեր արարքով դուք հետ եք շրջում այն առաջընթացը, որ ձեռք է բերվել հայասան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման ընթացքում: Ավելի լավ կլիներ լուռ մնայիք: Հատուկ ամոթանք Ալեքսանդր Հեյգին, որովհետեւ նա ծառայել էր նախագահ Ռեյգանի օրոք, որը ճանաչել էր ցեղասպանությունը», նշեց տիկին Էվանսը, եզրափակելով իր ելույթը հետեւյալ խոսքերով. «Հայկական այս փորձառությունը հոգուս մեջ հյուսվել է ճիշտ այնպես, ինչպես հյուսված են խաչքարերի քարդ նախշերը: Դա հիանալի է: Տխուր է, բայց նաեւ հուսադրող: Ինչ պետք է անենք: Չպետք է հանձնվենք: Մենք պետք է շարունակենք պայքարը, ավելի փորձառու դարձած, առավել իրազեկված, հետեւաբար նաեւ ավելի լավ զինված: Մենք պետք է շարունակենք կրթել, դաստիարակել, իրազեկել: Դուք եւ ձեր նախնիները արժանի եք, որ մարդիկ ներողություն խնդրեն ձեզանից եւ ճանաչեն 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը»:

Տարաբնույթ

Լուռ հասարակության կորուսյալ դուստրեր

Այսօր, 2007 թվականին, աշխարհում կան ավելի շատ ստրուկներ, քան 200 տարի առաջ: Ի տարբերություն 1600-ականներին եւ հետագա տարիներին Աֆրիկայից բռնի փախցրած եւ Ամերիկայում ստրկության մատնված միլիոնավոր մարդկանց, մերօրյա ստրուկները հաճախ լիովին իրենց տները հոժար կամքով՝ բարեկեցիկ առագա ստեղծելու երազներով:

Նրանք աշխարհի տարբեր ծայրերի ամենաաղքատ եւ աղքատ ընտանիքներից են. հետեւաբար նաեւ՝ հաճախ կրթության հնարավորություն չունեցած: Նրանց մոտենում են վստահված անձնավորություններ եւ առաջարկում աշխատանք արտասահմանում՝ մատուցողուհիներ, ամուսնի լվացողներ, պարուհիներ: Նրանք հաճախ 25 տարեկանից բարձր չեն լինում. ոմանք՝ ընդամենը 14 գարուն տեսած:

«Շատ լավ էլ գիտեն, թե ուր են իրենց տանում», այս ամառ ինձ ասաց Հայաստանում մի մառնավաճառ: «Էդ տասը տարի առաջ էր, որ չգիտեին. հմի սաղն էլ գիտեն, որ Դուբայ էդ գործով են գնում»:

Արաբական Միացյալ Էմիրությունները թերեւ առեղն հայտնի է Հայաստանում որպես մարդկանց թրաֆիկինգի կամ մերօրյա ստրկության ժամատեղի: Բայց միջնարեւելյան հարուստ երկրները չեն միայն թրաֆիկինգի սպառիչներ: Այս տարվա սեպտեմբեր ամսին, օրինակ, Հարավային Եվրոպայում ձերբակալված թրաֆիկինգի մի ցանց կազմակերպել էր հարյուրավոր երիտասարդ ուկրաինացի, հայաստանցի եւ ղազախստանցի երիտասարդ կանանց օրինական տեղափոխումը Իտալիա՝ իբր թատերական հանդեսներում աշխատելու համար: Իտալիա ժամանելուն պես, խաբված կանանց բռնի ուժով ստիպել էին մարմնավաճառությամբ զբաղվել գիշերային ակումբներում եվ բնակարաններում:

Ծանոթներից մեկը՝ մի «անունով» տղա, հետս վիճում էր անցած տարի, որ ոչ մի աղջկա չեն կարող ստիպել լնել տղամարդկանց հետ իր կամքին դեմ: Նա դիտել էր հայկական մի ֆիլմ Դուբայում թրաֆիկինգի մասին եւ ինձ առաջարկում էր մի օր գնալ Միացյալ Էմիրություններ՝ «կայֆ ժամանակ անցկացնելու»: Բոլոր բերած օրինակներս աղարդյուն անցան երիտասարդին համոզելու, որ Դուբայի հայաստանցի աղջիկների եւ կանանց մեծ մասն իրենց կամքին հակառակ են այնտեղ եւ մարմնավաճառ չեն, մինչեւ որ ստիպված էի հասկացնել, որ իր հորաքրոջ կորած 14-ամյա դուստրը, ամենայն հավանականությամբ, թրաֆիկինգի զոհ է: Նրա ակամա գլորվող արցունքները, կարծես, հասկանալու նշաններ էին:

Բայց Դուբայ այցելող մի ուրիշ երիտասարդ բիզնեսմենի նոկնիսկ չփորձեցի համոզել այս ամառ Հայաստանում, որ կանայք ապրանք չեն: Նա ինձ ասում էր, թե երազում է սեւամորթ կնոջ հետ լնել, եւ խոստանում էր նվերներ, եթե ես իրեն Ամերիկայից մի «սեւամորթ» ուղարկեի: 1600-ականների ստրկատիրական մտածելակերպը չէր փոխվել: Սակայն այդ դեպքում ապրանքները ոչ թե մի ռասայի ներկայացուցիչներ էին, այլ մարդկության ուղիղ կեսը՝ կանայք:

Անապահով ընտանիքներից լինելուց բացի թրաֆիկինգի զոհերին միացնում է նաեւ այլ փաստ՝ կին լինելը: Լինելով հանցանք ամբողջ մարդկության դեմ՝ թրաֆիկինգը նաեւ կանանց ճնշման միջոց է եւ ինչ-որ չափով այդ ճնշման հետեւանք: Հայաստանը նախկին սովետական երկրների հետ համեմատած ունի կանանց նվազագույն ներկայացուցչությունը օրենսդրական մարմնում. Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի անդամների հինգ տոկոսն է ընդամենը կին, երբ կանայք կազմում են նույն հանրապետության բնակչության կեսից ավելին: Մարդկանց թրաֆիկինգն ամենաարագ աճող կազմակերպված միջազգային հանցանքն է: Հայաստանը ոչ միայն թրաֆիկինգի զոհերի աղբյուր է, այլեւ փոխանցման կենտրոն: «Զվարթնոց» օդանավակայանի զվարթ ուղեւորներից շատերը հայտնվում են ստրկության պայմաններում՝ ստիպված լինելով ծառայել տասնյակ տղամարդկանց ամեն օր, նույնիսկ իրենց հիվանդ օրերին:

Թրաֆիկինգի զոհ դառնալու պատճառները շատ են՝ աղքատություն, անապահովություն, տգիտություն եւ միամտություն, իսկ թրաֆիկինգի դեմ չպայքարելու պատճառներն՝ ավելի շատ: Դրանց թվում են Հայաստանում կանանց հանդեպ «ավանդական դարձած» բռնությունները եւ կանանց որպես ապրանքի, տղամարդուց ցածր էակի մասին մտածելու հոգեբանությունը: Եթե Հայաստանի օրենսդրական մարմնում ավելի շատ կանայք լինեին, որը նաեւ կարացուցեր կանանց ճնշման նվազեցում, թերեւս Ազգային Ժողովը կմտածեր հազարավոր կորուսյալ զավակներին գտնելու եւ նրանց օգնելու կամ թրաֆիկինգը կանխարգելելու մասին:

Բայց կանանց հանդեպ բռնությունը ժխտելու մեջ կա նաեւ ինչ-որ պատվի խնդիր, ու եթե ժխտում են, ուրեմն գիտեն, որ սխալ են: Անցած տարի, երբ որոշ հասարակական կազմակերպություններ պարզեցին, որ հայաստանցի կանանց մոտավորապես կեսը ֆիզիկական բռնության են ենթարկվել, Ազգային Ժողովի 95 տոկոս կազմող տղամարդ անդամներից մեկն ասաց, որ ճնշման հարցը բարձրացնող կազմակերպությունները պարզապես գրանտներ են ուզում եւ իջեցնում են Հայաստանի վարկը հանուն իրենց գրպանների: «Նրանք չպետք է ներկայացնեն Հայաստանն ինչ-որ աֆրիկյան ցեղ, որտեղ մարդիկ իրար ուտում են»:

Իսկ այդ «աֆրիկյան ցեղերն», ի տարբերություն այսօրվա հայ օրենսդիրների, դեռ 1600-ականներին մտահոգված էին իրենց ստրկացած ցեղակիցների ճակատագրով: Ստրկություն, որ բռնության հանդեպ անտարբերության արտադրություն է:

ՍԻՄՈՆ ՄԱՂԱԲՅԱՆ

Սիմոն Մաղաբյանը Կոլորադոյի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի ուսանող է, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եւ ցեղասպանության ուսումնասիրման միջազգային ինստիտուտի շրջանավարտ: 2007 թվականին թողարկել է «Ռոմի Մաունթին Սլեյվըրի» վավերագրական ֆիլմը՝ Կոլորադո նահանգում մարդկանց թրաֆիկինգի մասին:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻԺԻ

ՄԻԺԻ-ի քաղաքացիական դասընթացի մասնակցության հայտարարություն

Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտ՝ ՄԻԺԻ, հայաստանյան ոչ կառավարական կազմակերպությունը կազմակերպում է քաղաքացիական դասընթաց՝ Պետականության, Ժողովրդավարության, Մարդու Իրավունքների, Ազգային անվտանգության, Քաղաքացիական հասարակության, Սահմանադրական կարգի եւ Քաղաքացիական ակտիվություն թեմաներով:

Դասընթացն անվճար է, ճկուն ժամանակացույցով եւ տեւելու է 2 ամիս՝ 2007թ-ի դեկտեմբերի կեսերից մինչեւ 2008թ-ի փետրվարի կեսը:

Հետաքրքրվածության դեպքում խնդրում ենք դիմել ՄԻԺԻ նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 10-ը, երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 10:00-17:00-ը, ներկայացնել Ձեր ինքնակենսագրականը /CV/ եւ լրացնել համապատասխան հարցաթերթիկը:

Ներկայացված դիմումների հիման վրա կատարվելու է նախնական ընտրություն, իսկ հետո հարցազրույցի ժամանակ՝ վերջնական ընտրություն: Մերժման պարագայում դիմումատուները չեն տեղեկացվելու եւ մերժումը չի պատճառաբանվելու:

Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտ՝ ՄԻԺԻ
Երեւան, 22 նոյեմբերի, 2007

ՄԻԺԻ-ն հայաստանյան ոչ կառավարական, անկախ կազմակերպություն է, որի հիմնական նպատակն է նպաստել մարդու իրավունքների սկզբունքների, սոցիալական արդարության եւ քաղաքացիական գոտեկցության (սոլիդարության) վրա հիմնված ժողովրդավարական պետության զարգացմանը Հայաստանում: ՄԻԺԻ-ի հիմնական գործունեության ոլորտներն ու գերակայություններն ընդգրկում են աղքատության հաղթահարումը եւ քաղաքացիական մասնակցությունը, կրթության հիմնախնդիրները, քաղաքացիների ինքնակազմակերպումն ու հանրային վերահսկողությունը, ինչպես նաեւ ՀՀ այլ կարեւորագույն ռազմավարական խնդիրներ: ՄԻԺԻ-ն խթանում է կամավոր հիմունքներով, նյութական ոչ շահախնդիր քաղաքացիական ակտիվ, գիտակից, հանձնառու, ներգործուն եւ նվիրական աշխատանքն ու մշակույթը, որը կազմում է ՄԻԺԻ-ի հիմնադիր կենսական սկզբունքներից մեկը:

Հասցե՝ Այգեձորի 4/1, 0019
Հեռ/Ֆաքս՝ (+374 10) 26 47 12
Բջջային՝ (+374 10) 43 21 19
Էլ փոստ՝ info@idhr.am
Կայքէջ՝ www.idhr.am

ԱՐՏԵՐԿՐՔ

«Մի անգամ Բրազիլիայում»

Բրազիլական խոհանոցի եւ երաժշտության մենախոսություն

Օվկիանոսից անդին մի երկիր կա, որ մեզ առաջին պահին սուրճ ու ֆուտբոլ է հուշում, վերջին տարիներին՝ ոմանց նաեւ սերիալներ: Հավանաբար կռահեցիք՝ Բրազիլիան է, երկիր, որի դրոշի վրա «Ordem e Progresso» («Կարգապահություն եւ առաջադիմություն») նշանաբանն է, կարծում եմ՝ այն ավելին է հուշում:

Բրազիլիայում հնուց ի վեր բնակվել են հնդկացի ցեղեր, 1500-ին այնտեղ է հասել պորտուգալացի ծովագնաց Կաբրալը, 1530-ին Բրազիլիա են եկել առաջին պորտուգալացի գաղութաբնակները... Սակայն մեր նպատակը պատմական ակնարկը չէ, այլ առիթը կամ ավելի ստույգ՝ լատինամերիկյան (Վենեսուելա, Կուբա, Պերու, Բրազիլիա, Արգենտինա, Կոլումբիա, Մեխիկա) խոհանոցի եւ երաժշտության փառատոնը, որ կազմակերպել է Երեւանում գործող Իսպանական կենտրոնը (CENTRO HISPANO՝ հիմնադրված 2003-ին)՝ նախագահ Աշոտ Փարսյանի գլխավորությամբ, նոյեմբերի 2-ից մինչեւ դեկտեմբերի 14-ը՝ ամեն ուրբաթ The Club ակումբում: Բրազիլիային նվիրված հերթական տոնը՝ նոյեմբերի 23-ին հովանավորել էր ՀՀ-ում Բրազիլիայի դեսպանությունը (ի դեմ, ՀՀ-ում լատինամերիկյան երկրներից առայժմ միակը) ի դեմս տիկին դեսպան Ռենատե Ստիլլեի: Մատուցվեցին ազգային ճաշատեսակներ, խմիչքներ, հնչեց ազգային երաժշտություն՝ մշակված լատինամերիկյան մշակույթի լավագույն գիտակ Վիկտոր Ռոխասի կողմից, ազգային պարեր... Բրազիլացիներն էլ խաչի նման կերակուր ունեն, որ սկզբնապես աղքատների մենաշնորհն է եղել, կոչվում է ֆեժոադա, բայց միչ ավելի թանձր, բրազիլացիների ամենօրյա ճաշացանկում բրինձն ու լոբին պարտադիր են, լավաշ ու մատնաշաշ, անշուշտ, չունեն, սիրում են խմել քայփիրինյա (Caipirinha), որը շաքարեղեգի օղու (կոչվում է քաշասա «cachasa») կիտրոնի, շաքարի խառնուրդ է՝ հրամցված սառույցով:

Իսկ ի տարբերություն մեր իրականության՝ հանգստյան օրերին Բրազիլիայում թերթերի ու պարբերականների ամենաածավալուն տարբերակներն են լույս տեսնում:

«Հայրենիքում է քո եւ անցյալը, եւ ապագան: Օտար երկրում՝ միմիայն ներկան»:

Լյուդվիգ Միրվելդ

Առիթը բաց չթողեցի ավելին իմանալու առավելապես Բրազիլիայի հայ համայնքի մասին: Հայերի մուտքը Բրազիլիա սկսվել է 19-րդ դարի վերջերին, ավելի սեվար խմբերով ներգաղթել են առաջին համաշխարհային պատերազմից եւ Կիլիկիայի հայերի բռնագաղթից (1921-22) հետո: Այսօր Բրազիլիայում հաշվվում է շուրջ 35-40000 հայ, որոնք բնակվում են հիմնականում Սան Պաուլու, ինչպես նաեւ Ռիո դե Ժանեյրո քաղաքներում:

Զրուցակիցս ՀՀ-ում Բրազիլիայի դեսպանության փոխխորհրդատու, մամուլի եւ առեւտրի կցորդ պրն **Հովսեփ Ն. Սեֆերյանն** է: Վերջինիս անմիջական, անկեղծ ու սրտացավ խոսքը սիրեց մտաբերել բրազիլացի քաղաքական գործիչ եւ պատմաբան Սիլվա Պարանոսի (1819-1912) հետեւյալ միտքը. «Դիվանագետը ծառայում է ոչ թե այս կամ այն վարչակարգին, այլ իր հայրենիքին»:

- Մտահոգիչ խնդիրներ շատ կան, Բրազիլիայում հայերի ամենամեծ թշնամին թուրքը չէ, այլ ազատությունը՝ խառնածին ամուսնություններն ավելի են արագացնում ուծացումը: Անկախ Հայաստանի առաջնահերթ նպատակը պետք է լինի սփյուռքի հոգեւոր սննդի ապահովումը, մշակութային համագործակցության աշխուժացումը, որը հնարավորինս կերկարաձգի ձուլումը: Մամոնայի գերիշխանության պայմաններում ազգային արժեքները հետ կմնան: Այսօր Սան Պաուլուում հայկական դպրոց կա, բայց բավարար հայ աշակերտ չկա, կորեացին ու ճապոնացին են հաճախում, հայերի երեխաները նախընտրում են հանրային դպրոցները: Մշակութային միություններն ընկերային ակումբների են վերածվում: Երբ համայնքում բացակայում է ներքին պայքարը, որը, ի դեմ, շատ առողջ բան է եւ անհրաժեշտ, գաղութը խոր նիրհի մեջ է հայտնվում:

Վերջերս Մերկոսուրի խորհրդարանը, որը լատինամերիկյան մի քանի երկրների խորհրդարանների միությունն է, ընդունել է հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձեւ: Այս առթիվ պրն Սեֆերյանը հավելեց.

- Այո, փաստը ողջունելի է եւ կարելի է որակել՝ մեկ քայլ առաջ: Մեր գենը ճշմարտությունն է: Բրազիլիայում հայ մտավորականների պակաս կա, բայց ազգային հարցերի հանդեպ անտարբեր հայ չկա: Մտավորական ընլալը եւ ազգային հարցին հանդեպ անտարբեր չընլալը տարբեր բաներ են: Կան հարուստ հայեր եւ իրենց տեղացի բարեկամները, որոնք հայանպաստ կեցվածք կորդեգրեն:

Այսօր ՀՀ Ազգային ժողովում ձեւավորման փուլում է հայ-բրազիլական պատգամավորական խումբը: Մտադիր ենք նոր հասարակական կազմակերպություն ստեղծել, որն ուզում ենք կոչել «Բրազիլ Յանց»՝ հայկական ազգանվան վերջավորությամբ, նաեւ անգլերեն «Brazil Yans»՝ «բրազիլացիներ» բառի զուգորդությամբ, որի նպատակը հայ-բրազիլական կապերի ամրապնդումն է:

Դեսպանությունը միշտ բաց է՝ լսելու եւ քննարկելու նոր առաջարկներ, գաղափարներ, կարծիքներ, որոնք պիտի նպաստեն երկու երկրների բարիդրացիական հարաբերությունների, մշակույթների երկխոսության խորացմանն ու զարգացմանը:

ՍԱՀԱԿՈՒՆՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ

«Թափանցիկ տեղական ինքնակառավարում»

Գեղարքունիքի մարզի Վարդենիսի վարչական շրջանի Գեղամաբակ գյուղի ցաքուցրիվ, քանդված ու կիսավեր շինություններ մեջ մեկն ընդհանուրից առանձնանում է իր ցուցանակով: Դա Գեղամաբակի համայնքապետարանն է, որի դռան, սակայն, փակցված է Հայաստանի Հանրապետական կուսակցության ցուցանակը: Տեղական իշխանության գոյության մասին հուշող ոչինչ չկա, բացի դռան փակցված ձեռագիր մի հայտարարությունից, որով համայնքի անասնատերերին տեղեկացնում են, թե այլ համայնքներից անասուններ ներկրելու դեպքում անհապաղ պետք է հայտնել համայնքի ղեկավար Գ. Բարսեղյանին կամ անասնաբույժ Հ. Հովհաննիսյանին՝ առկա հիվանդությունների դեմ պայքար մղելու համար: Իր դիմաց հայտարարությունն ունի 2-րդ մաս, որով անասնատերերին 2 դեղատոմս է առաջարկվում դաբաղ հիվանդությունը բուժելու մասին:

այն է՝ համայնքապետարաններում հերթապահություն սահմանել, որպեսզի օրական գոնե մի աշխատակից լինի աշխատավայրում: Խե՜ղճ աշխատանքային օրենսդրություն...

Գեղամաբակում հանդիպեցինք նախկին ավագանու անդամ Արմեն Դանիելյանին: Նա չի աշխատում, զբաղվում է իր տնտեսությամբ: Համայնքապետարան որեւէ հարցով չի դիմել, թեպետեւ իրեն ամենից շատ հուզում է գործազրկության հարցը, որի կապակցությամբ ավելորդ է համարում դիմել տեղական իշխանություններին: Տեղյակ է վերջին ժողովի մասին, որին չի մասնակցել, սակայն լսել է, որ ինչ-որ օգնության մասին էր խոսքը. պիտի գարի, կորնգան ցանեն ու հասկացնեն համայնքի բնակիչներին: Բանն այն է, որ տարիներ առաջ, նախորդ համայնքապետի պաշտոնավարման ժամանակ վերջինիս խորհրդով մարդիկ հրաժարվել են ի-

Գեղամաբակի համայնքապետ Գ. Բարսեղյանը, նրա հոր՝ ավագանու անդամ Վ. Բարսեղյանի հավաստմամբ, վնասված ջրատարը վերանորոգելու նպատակով 1500 ԱՄՆ դոլար գումար է ծախսել իր գրպանից էխկավատորի, զոդման եւ այլ աշխատանքների համար: Համայնքապետարանի կահավորումը նույնպես իրականացրել է իր միջոցների հաշվին, քանի որ համայնքապետարանը միջոցներ չունի: Եվ սա այն դեպքում, երբ համայնքապետարանն ունի տարիների աղքատներ, ամիսներ շարունակ չվարձատրվող համայնքապետարանի աշխատակիցներ, ներառյալ՝ համայնքապետը: Այդ դեպքում որտեղի՞ց են այդ միջոցները: Ավագանու անդամ Վ. Բարսեղյանը պատասխանում է. «Ես շատ գիտե՞մ՝ որտեղից»: Ապա «հայտնաբերում» է ինչպես աղքատներ, «կինը մահացավ է աշխատում: Ես էլ հայրն եմ, անասուններ եմ պահում եւ օժանդակում եմ իրեն: Այսինքն՝ եթե ես իրեն չօժանդակեմ, ինքը չի

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

Ավագանու նիստ՝ ընտանեկան սեղանի շուրջ

Նկարագրվածը Գեղամաբակի տեղական ինքնակառավարման մարմնի գործունեության մասին միակ եւ վերջին տպավորությունը կարող է լինել, եթե գյուղի բնակիչներն իրենց պատկերացումներով չլրացնեն այն:

Առաջին զրուցակիցս՝ Գրետա Ավագյանը, բազմանդամ ընտանիքի մայր է: Ընտանիքում 7 շունչ են: Ինքը համայնքապետարան չի գնում. տանն ընդունված է, որ նման գործերով զբաղվի ամուսինը: Չի կարողանում հիշել, թե վերջին 2 ամսում ինչ աշխատանքներ է կատարել համայնքապետարանը: Միայն կարող է ասել, որ 7 ամիս առաջ իր եւ 3 այլ ընտանիքների մեղվափեթակներ են տվել: Համայնքապետարանի աշխատողներից միայն հավաքարարին է ճանաչում: Ավագանու անդամներին Գրետա Ավագյանը չի ճանաչում: Իսկ համայնքի խնդիրներից նրան ամենից շատ մտահոգում է խմելու ջրի հարցը: Չեն կարողանում տնամերձ հողամասում գոնե կարտոֆիլ ցանել, քանի որ ամռանը ջրի հարցն ավելի է սրվում: Գյուղում 1 աղբյուր ունեն, եւ երբ հարեւան գյուղերի բնակիչներն արգելափակում են Գեղամաբակի ջուրը, իրենք հարկադրված «էշի դաչկով» ու ձեռքով Շաջրեք գյուղից են ջուր բերում: Իսկ Գեղամաբակը Շաջրեքից շուրջ 1 կմ հեռավորությամբ է:

Համայնքի միակ աղբյուրից ջուր կրող 2 կանայք՝ Մարիետա եւ Մարիամ Դանիելյանները, հավաստում են, թե համայնքապետը «լավ տղա է», «խեղճը օգնում է, երբ Այրից կամ մեկ այլ գյուղից ջուրը կտրում են», գնում եւ կարգավորում է: Վերջին անգամ 2-3 ամիս առաջ են եղել համայնքապետարանում, երբ ինչ-որ ժողով են հրավիրել եւ համայնքի բնակիչներին տեղեկացրել, թե կորնգան է ցանվելու, բայց տնտեսությունները իրենք պետք է հավաքեն բերքը: Դրա վերաբերյալ դիմում էլ են գրել, սակայն այդպես էլ չկարողացան ներկայացնել դիմումի բովանդակությունը: Համայնքապետարանի աշխատողներից ճանաչում են համայնքապետին, հավաքարարին, Արթուրին եւ Վալերին, սակայն չգիտեին, թե նրանցից ո՞վ է հաշվապահը: Եթե հարց է լինում, ուղղակի դիմում են համայնքապետին: Մեր այն հարցին, թե երբ համայնքապետարանը փակ է լինում, սակայն հարկ է լինում դիմել համայնքի ղեկավարին, ինչպե՞ս են վարվում, Դանիելյանները կրկին հավաստացրին, թե համայնքապետը «շուտ-շուտ է գալիս», եթե պետք է, «զանգ են տալիս, գալիս է» (համայնքապետը Վարդենիս քաղաքում է բնակվում): Ավագանու անդամներին նույնպես չեն ճանաչում, չնայած գիտեն, որ նման մարդիկ կան:

Գեղամաբակի համայնքապետարանի դուռը միշտ փակ է, որովհետեւ համայնքապետը մարզպետարանում է



Գեղամաբակը Գեղարքունիքի մարզի Վարդենիսի վարչական շրջանի փոքր համայնքներից մեկն է, բայց ոչ ամենափոքրը: Գյուղում ապրում է 22 ընտանիք, 107 փաստացի բնակիչ: Եվ այս փոքր համայնքի բնակիչները չգիտեն, թե ովքե՞ր են իրենց ավագանու անդամները, որքա՞ն է իրենց համայնքի բյուջեն:

Մեկ այլ առանձնահատուկ խնդիր է Վարդենիսի վարչական շրջանի որոշ գյուղական համայնքների ղեկավարների՝ տվյալ համայնքում միայն իրավաբանորեն «բնակվելու» փաստը: Շուրջ 8 գյուղական համայնքների ղեկավարների փաստացի բնակության վայրն ուրիշ է, մինչդեռ տվյալ համայնքների բնակիչների համար այս երեւույթը բնավ արտառոց չէ: Սա չի նշանակում նաեւ, թե նույն համայնքում բնակվելն արդեն համայնքի ղեկավարի լավ աշխատանքի կամ աշխատանքային ռեժիմի պահպանման գրավականն է:

Երբ գյուղական համայնքներում աշխատանքային ռեժիմը չպահպանելու մասին մեր մտահոգությունը կիսեցինք Գեղարքունիքի փոխմարզպետ Ա. Ղուկասյանի հետ, նա, իբրեւ լուծում, մեզ փոխանցեց մարզպետարանի դիրքորոշումը.

Գեղամաբակի համայնքապետարանի դուռը միշտ փակ է, որովհետեւ համայնքապետը մարզպետարանում է

կարող աշխատել: Ես էլ եմ մանկավարժ աշխատում: Իմ գումարով, իմ հարսի գումարով իմ տղան գյուղապետ է: Ես մեր գումարները տալիս եմ իրեն, իմ անասուններն այս տարի 42-ն էին, 32 հասը ծախել եմ, փողը տվել եմ իրեն»: Թե որքան ժամանակ կարող է այսպես ապրել Բարսեղյանների ընտանիքը՝ սեփական եկամուտների հաշվին համայնքը պահելով, ընտանիքի հայրը պատասխանում է. «Բա որ կառավարություն չկա, ինչ կարող եմ անել: Ստիպված իմ փողը ներդնում եմ տղայիս համար, որ նա չթողնի-հեռանա հանրապետությունից»:

2007 թ. Գեղամաբակի համայնքային բյուջե է մուտքագրվել շուրջ 900 հազար դրամ: Դոտացիա չեն ստացել, թեպետեւ գրություն են ստացել ու համապատասխան որոշումից հետո սպասել են տարիներով կուտակված աշխատավարձի պարտքերի մարմանը: Այդ պարտքերի մարման ուրիշ ճանապարհ, բացի պետական աջակցության միջոցով կարգավորումից, իրենք չեն տեսնում:

Համայնքապետարանի աշխատողներին Վ. Բարսեղյանը ճանաչում է: Նրանք բոլորը, բացի հավաքարարից, Վարդենիսի բնակիչներ են, քանի որ համայնքապետարանի աշխատակիցներն օրենքի պահանջով պետք է ունենան բարձրագույն կրթություն, իսկ համայնքում բարձրագույն կրթություն ունեցողներ չկան: Այս աշխատողներն էլ աշխատավարձ չեն ստանում, աշխատանքի ներկայանալիս էլ շատերն ավտոբուսով հետ վերադառնալ մինչեւ աշխատանքային օրվա ավարտը, քանի որ Գեղամաբակ-Վարդենիս երթուղում աշխատող ավտոբուսը օրական 1 երթ է իրականացնում: Համայնքային ենթակայության 2 հիմնարկում՝ ակումբում եւ գրադարանում, աշխատողներ չունեն, քանի որ համայնքը չի կարողանում վարձատրել նրանց:

Վ. Բարսեղյանը համայնքի բնակիչներին «աֆերիստներ» է համարում, քանի որ վերջիններս հրաժարվել են սեփական հողամասերից ընտանեկան նպաստ ստանալու համար: Սակայն, ինչպես պարզվեց, 22 ընտանիքից միայն 3-ն է նպաստառու:

Համայնքի ավագանու անդամներից մյուս երկուսը նույնպես համայնքի ղեկավարի ընտանիքի անդամներն են՝ կինը եւ մայրը՝ Լյուբա եւ Անահիտ Բարսեղյանները: Ավագանիներից չորրորդը Հովիկ Թովմասյանն է, ով հաշվառված է Գեղամաբակում, սակայն մշտապես բնակվում է Վարդենիս քաղաքում եւ, կարծես թե, համայնքի ղեկավարի ազգականը չէ: Այս պարագայում, երբ ավագանու նիստ կարելի է հրավիրել ընտանեկան ճաշի սեղանի շուրջ, ավելորդ է խոսել համայնքի ներկայացուցչական մարմնի դերակատարության եւ համայնքի ղեկավարին հակակշիռ դառնալու՝ ավագանու առաքելության մասին:

Փոքր համայնքներում «ընտանեկան» կամ «գրպանային» ավագանու կազմավորման պատճառներից մեկն այն է, որ համայնքի անդամները ավագանի առաջադրվելու եւ դրա համար ընտրագրավ մուծելու ցանկություն չունեն: Մյուս պատճառը ավագանու դերի թյուրըմբռնումն է: Հենց այսպիսի համայնքներում ՏԻՄ-երը եւ մասնավորապես համայնքների ղեկավարները հայտնվում են մենաշնորհատերերի դիրքերում: Տպավորությունն այնպիսին է, որ համայնքը, որն ունի բյուջե եւ ստանում է պետական դոտացիաներ, գոյություն ունի մեկ ընտանիքի եւ նրա բարգավաճման համար:

«Մենք վնաս տվող մարդիկ չենք: Գողություն չենք անում, չենք թալանում: Տնով աշխատում ենք, մենակ թե համայնքապետը աշխատավարձ չի ստանում: Աշխատավարձ ենք ստանում, գյուղը պահում ենք: Մի խոսքով՝ մենք բոլորս աշխատում ենք, որ համայնքապետն աշխատի»,- ամփոփում է համայնքապետի հայրը:

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՓՉԱՂԱՆՅԱՆ

Ինչպե՞ս է ծախսվում կառավարության հատկացումը Գեղարքունիքի մարզում

Կառավարության ընթացիկ տարվա սեպտեմբերի 6-ի N 997-Ա որոշմամբ հանրապետության տասը մարզերին կառավարության պահուստային ֆոնդից հատկացվեց մոտ 10 միլիարդ դրամ՝ մարզերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների ուղղությամբ իրականացվող աշխատանքների համար:

Գեղարքունիքի մարզին հատկացվել է 877 միլիոն դրամ, որով մարզի 17 համայնքներում իրականացվում է 17 ծրագիր: Ինչպե՞ս եւ ո՞վ է որոշել, թե որոնք են Գեղարքունիքի մարզի առաջնահերթ խնդիրները, ինչ ծրագրեր են իրականացվելու, ինչպե՞ս է ծախսվելու կառավարության պահուստային ֆոնդից տրված հատկացումը, եւ որո՞վ են ընտրված հիմնախնդիրներն արտացոլում մարզի բնակիչների կարծիքը: Այս հարցերի պատասխանները ստանալու համար այցելեցինք Գեղարքունիքի մարզպետարան, որտեղ մեզ ընդունեց փոխմարզպետ Արտուշ Ղուկասյանը: Մարզ կատարած մեր այցը կարծես այնքան էլ հաճելի չէր. գոնե այդպիսի տպավորություն ստացանք փոխմարզպետի ընդունելությունից, ում ակնհայտորեն դուր չեկան մեր հարցերը:

Փոխմարզպետ Արտուշ Ղուկասյանի ներկայացմամբ՝ Գեղարքունիքի մարզին հատկացված 877 մլն դրամից շուրջ 270 մլն-ը համաֆինանսավորման ծրագրերին է հատկացվել, իսկ մոտ 500 միլիոն դրամը՝ համայնքային ծրագրերի իրականացմանը: Մարզի հիմնախնդիրներն ըստ առաջնահերթությունների ընտրելիս, փոխմարզպետի խոսքով, հիմնականում հաշվի է առնվել 2007 թ. գարնան հեղեղումների պատճառած վնասների վերացումը:

Ըստ այդմ՝ որոշվել է Գավառագետի հունի մաքրման աշխատանքներին հատկացնել 200 մլն դրամ, Մարտունի գետի Գեղովիտի հատվածում նույն աշխատանքների համար՝ 150 մլն դրամ:

«Մնացած գումարները հիմնականում հատկացվել են խաղահրապարակներ, հիվանդանոցներ տանող ճանապարհների, խմելու ջրագծերի, գազատարների կառուցման համար: Ընդհանուր առմամբ, Գեղարքունիքի մարզում իրականացվում են 17 անվանական ծրագիր 17 համայնքներում»,- ասաց փոխմարզպետ Ա. Ղուկասյանը: Կառավարության պահուստային ֆոնդից տրված գումարով նաեւ վերանորոգվելու են երկու մանկապարտեզներ Լճաշենում եւ Օրվագյուղ համայնքներում. Այգուտի սողանքների պատճառով բնակարաններից զրկված 15 բնակիչների համար ձեռք է բերվելու 15 տնակ, ինչպես նաեւ՝ մի քանի համայնքներում համաֆինանսավորմամբ գյուղտեխնիկա է ձեռք բերվելու:

Պատասխանելով հարցին, թե ինչպե՞ս են ընտրվել վերը նշված ծրագրերը, ովքե՞ր են դրանք առաջարկել, եւ ի՞նչ մոտեցումներով են վերոհիշյալները համարվել մարզի առաջնահերթ հիմնախնդիրներ, փոխմարզպետ Արտուշ Ղուկասյանն ասաց. «Քանի որ կառավարությունից ցուցում կար գարնան հեղեղումների պատճառած վնասների վերացումն առաջնահերթություն համարել, մենք էլ որոշեցինք դրանց լուծման համար գումար հատկացնել: Մյուս կողմից, մարզպետարանի ծրագրերի բաժնում լիարժեք տեղեկություններ կան մարզի 92 համայնքների բոլոր հիմնախնդիրների վերաբերյալ եւ, բնական է, մեզ որեւէ տեղից ցուցում տալու կամ կողմնորոշելու անհրաժեշտություն չկար»:

Գեղարքունիքի մարզում իրականացվող ծրագրերի նախագծերը, Ա. Ղուկասյանի ասելով, պատվիրվել են ճյուղային նախարարություններում, իսկ շինարարության վերահսկողությունն իրականացնում է մարզպետարանը: Ինչ վերաբերում է մարզպետարանի հետ համաֆինանսավորմամբ կատարվող աշխատանքներին, ապա, փոխմարզպետի խոսքով, դրանց վերահսկողությունը ոչ թե իրենք, այլ մյուս կողմն է իրականացնում: Մարզպետի տեղակալը հատուկ ընդգծեց, որ իրենք փորձել են փոքր ծրագրեր իրականացնելով չփոշիացնել կառավարության տրամադրած գումարները: Հետո էլ հավաստիացրեց, որ աշխատանքների ավարտին մարզի բնակչությունն արդյունքը զգալու է:



Գավառագետի հունը վերջապես կմաքրվի (200 մլն դրամ Գավառագետը մաքրելու համար)

«Համայնքում իրականացվող ծրագրերի ընտրությանը մարզի բնակչությունը որքանո՞վ է մասնակցել» հարցին ի պատասխան՝ փոխմարզպետն ասաց. «Համայնքային ժողովների ժամանակ համայնքները ներկայացնում են իրենց խնդիրները, որոնք ընդգրկված են նաեւ տարածքային զարգացման ծրագրում: Բնականաբար, համայնքն էլ գիտի, որ այդ խնդիրներն ինքն է ներկայացրել»: Ինչ վերաբերում է կառավարության տրամադրած միջոցներով մարզում իրականացվող ծրագրերին բնակչության տեղեկացվածությանը, ապա, Արտուշ Ղուկասյանի խոսքով, ինքը հեռուստատեսությամբ ելույթ է ունեցել եւ հայտնել, թե ինչ միջոցներով են մարզում ծրագրեր իրականացվում:

Իրականացվող ծրագրերի մասին բնակչության տեղեկացվածության հարցը լուծվել է այսպանով, բայց փոխմարզպետը հավաստիացրեց, որ հիշյալ տեղեկատվությունը գաղտնի չէ, եւ մարզի յուրաքանչյուր բնակիչ մարզպետարանի տեղեկատվական կենտրոնից կարող է ծրագրի վերաբերյալ հարցման ի պատասխան, սակայն, մարզպետարանի տեղեկատվական կենտրոնում կառավարության հատկացած միջոցներով իրականացվող ծրագրերի մասին դեռեւս ոչ մի տեղեկություն չկար:

Սախարովի անվան կենտրոնի Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղի ղեկավար Լուսինե Թոփալաղալցյանը վստահ է, որ մարզպետարանի աշխատանքի թափանցիկությունը պետք է լիներ մինչեւ ծրագրերի հաստատումը. «Այս պահին դա հետաքրքիր չէ, ավելի հետաքրքիր է, թե համայնքները որքանո՞վ են ներգրավված եղել առաջնահերթությունները որոշելու քննարկմանը»:

«Ճիշտն ասած՝ տեղյակ ենք, որ կառավարությունը պիտի նման ծրագիր իրականացներ պետբյուջեի պահուստային ֆոնդի գումարներով: Փոխմարզպետին խնդրել եմ մեզ էլ ընդգրկել այդ ծրագրում: Ներկայացրել եմ մեր առաջնահերթ խնդիրները, բայց տեղյակ չենք՝ ընդգրկվե՞լ ենք, թե՞ ոչ: Օգնությունները համակարգող խորհրդի մարզային կառույցի անդամն էի, բայց անցած տարվա դեկտեմբերից ոչ մի քննարկման չեմ հրավիրվել»,- մեզ հետ զրույցում ասաց Շատվան գյուղի համայնքապետ Լյովա Աբրահամյանը՝ պատասխանելով հարցին, թե իրենք մասնակցե՞լ են մարզի հիմնախնդիրների ընտրության քննարկումներին:

Ի դեպ, այս համայնքում հիշյալ գումարներով որեւէ ծրագիր չի իրականացվում: Այգուտ գյուղում սողանքներից տուժած բնակիչների համար կառավարության հատկացրած միջոցներով 15 տնակ է ձեռք բերվելու: Համայնքի ղեկավար Հենրիկ Գաբրիելյանն ասաց, որ իրենք վաղուց են մարզպետարանին հիշյալ խնդրանքով դիմել: Մարզպետն անգամ գյուղում է եղել եւ տեսել, թե ինչպես են բնակարանները քանդվել սողանքների պատճառով:

Մեզ հաջողվեց միայն այս երկու համայնքապետերի հետ զրուցել: Մեր տեղեկություններով, սակայն, որոշ համայնքապետեր դժգոհել էին, որ իրենք չեն մասնակցել մարզում իրականացվող ծրագրերի ընտրության քննարկմանը: Բայց իրենց աշխատանքից կառչած համայնքապետերը, որոնց դժվար է մեղադրելը, բնականաբար, չեն ցանկանում բարձրաձայնել իրենց դժգոհությունների մասին:

ԳՈՌՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ո՞վ է որոշում համայնքի առաջնահերթ խնդիրը

Սեպտեմբեր ամսին ՀՀ կառավարության՝ մարզերին հատկացրած 10 միլիարդ ֆինանսական օժանդակությունից 1,366 մլրդ դրամ է հատկացվել Կոտայքի մարզին համայնքներում շինվերանորոգման մի շարք աշխատանքներ իրականացնելու համար:

Ներկայացված առաջարկներից կառավարությունը հաստատել է 43 ծրագիր, որոնք իրականացվում են մարզի 36 համայնքներում: Ծրագրերում հիմնականում ջրագծերի նորոգումն է (մարզի ջրագծերի մեծ մասը կառուցվել է 1960-61թթ. եւ հիմնանորոգման չի ենթարկվել), գազաֆիկացման աշխատանքները, հարթ տանիքների նորոգումը, ասֆալտապատման աշխատանքները, դպրոցների հիմնանորոգումը: Իրականացվել է Բալահովիտ-Գեղաշեն ճանապարհի փոսային նորոգումը եւ Երեւան-Գառնի-Գեղարդ ավտոճանապարհի հիմնանորոգումը:

Կոտայքի մարզպետարանի Տեղական ինքնակառավարման մարմինների հանրապետական գործադիր մարմինների գործունեության համակարգման վարչության պետ Սամվել Հակոբյանի հավաստմամբ՝ իրենք հարցում են արել համայնքներին՝ պարզելու, թե ինչ հրատապ խնդիրներ ունեն, որոնց լուծումն անհնար է սեփական բյուջեի միջոցներով, եւ ստացված առաջարկները ներկայացվել են կառավարություն: Վարչության պետի խոսքով՝ ծրագրեր են ներկայացրել մարզի բոլոր համայնքները, բացառությամբ Ծաղկաձորի եւ Հանրավանի, որը գումարային արժեքով կազմել է 1,6 մլրդ դրամ, սակայն կառավարությունը հաստատել է դրանց մի մասը (1,366 մլրդ դրամ արժողությամբ):

Նախապատվությունը տրվել է առավել հրատապ խնդիրներին, ինչպես նաեւ՝ այն համայնքներին, որտեղ տարբեր հիմնադրամների աջակցությամբ ծրագրեր չեն կատարվել, կամ էլ համայնքը զգալի ներդրում է կատարել: Օրինակ՝ Չարենցավանի քաղաքապետարանը սեփական ներդրումների հաշվին իրականացրել է «փախստականների թաղամասի» (9-րդ 10-րդ թաղամասեր) գազաֆիկացման նախագծման աշխատանքները:

Ինչ վերաբերում է առաջարկներին, ապա անվիճելի է, որ համայնքներում ընտրվել են ամենահրատապ խնդիրները, սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ այդ մասին տեղյակ են բնակիչները:

Քաղսի գյուղում իրականացվում է խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում, պոմպակայանի եւ ՕԿՋ-ի (օրվա կարգավորիչ ջրամբար) կառուցում: Նշված աշխատանքներն իրականացնելու համար կառավարությունը 50 մլն դրամ է հատկացրել, սակայն, համայնքապետ Սեդրակ Դավթյանի խոսքով, այն չի բավականացնում, քանի որ նախագծով գումարը 80 մլն դրամ է կազմում: Իրենք պատրաստ են սեփական միջոցներից ներդրում կատարել, քանի որ արդեն 30-40 տարի է, ինչ գյուղի վերին թաղը, որտեղ բնակվում է գյուղացիների 70 %-ը, ջրի խնդիր ունի, եւ ծրագրի իրականացումը ջրով կապահովի 500 ընտանիքի: Բացի այդ, «Հայջրմուղը» նույնպես խոստացել է ներդրում կատարել:

Աշխատանքներն արդեն ընթացքում են: Մինչեւ տարեվերջ կառավարության հատկացրած գումարով կնորոգեն խմելու ջրի ներքին ցանցը, կաշխատի ջրագիծը, իսկ ջրամբարը կկառուցեն գարնանը: Այն հարցին, թե ինչու՞ է Քաղսին կառավարություն ներկայացրել հենց այդ ծրագիրը, եւ այն քննարկվե՞լ է համագյուղացիների հետ, Ս. Դավթյանը պատասխանեց, որ բնակչությանը խմելաջրով ապահովելու հարցն իրենց ամենօրյա քննարկման խնդիրն է եղել: «Համայնքային ժողով էլ է եղել, ավագանիների ժողով էլ, առանց դրա ո՞նց կլինի: Որոշել ենք, որ առաջնահերթը խմելու ջրի հարցն է»:

Քաղսիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հասմիկ Դավթյանը նշեց, որ վերջին 1 տարում բնակիչները համայնքի ղեկավարին ուղղված իրենց դիմումներում հիմնականում սոցիալական բնույթի հարցեր են բարձրացնում, սակայն ընդունելությունների ժամանակ միշտ էլ դժգոհում են ջրից: Բացի այդ, համայնքապետի ընտրությունների ժամանակ բնակիչների թեկնածուներին ներկայացված առաջին պահանջն իրենց խմելաջրով ապահովելն է եղել:

Քաղսի գյուղի բնակիչներ Հրանտ Կարապետյանն ու Ժորա Հայրապետյանը հիշեցին, որ իրենց գյուղում համայնքային ժողով վերջին անգամ ընտրությունների ժամանակ է եղել՝ մի քանի ամիս առաջ, որի ընթացքում քննարկել են համայնքային կարեւորության մի շարք հարցեր, որոնց թվում նաեւ՝ վերին թաղամասի ջրի խնդիրը: «Ժողով առայժմ չենք արել, ղեկավարությունը նոր է, տարիներով մարդիկ ջուր չեն ունցել, դրա համար էլ որոշեցին ջրի վրա ծախսել, ամբողջ գյուղն է որոշել, ավագանին էլ որոշումը կայացրել է»,- ասաց մեկ այլ բնակիչ: Դույլերով ջուր կրող վերին թաղամասի բնակչուհիներից մեկը խոստովանեց. «Ժողով չենք արել, բայց բոլորս էլ գիտենք, որ ամենամեծ պրոբլեմը ջուրն է»:

Չարենցավան քաղաքում կառավարության այս ֆինանսական օժանդակությամբ իրականացվում է 3 ծրագիր: 25.000 բնակիչ ունեցող Չարենցավանում իրականացվել են 22 մլն դրամի (4100 քմ) ներքաղամասային փողոցների ասֆալտապատման աշխատանքներ: Թեեւ համայնքի բնակիչները գրավոր նման պահանջ չեն ներկայացրել, սակայն, քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Շուշանիկ Սարգսյանի խոսքով, համայնքի ղեկավարի ընդունելությունների ժամանակ միշտ էլ բարձրացրել են իրենց բակերի ասֆալտապատման խնդիրը:

Չարենցավանում ընթացքի մեջ է «փախստականների թաղամասի» գազաֆիկացումը: Տարիներ շարունակ, թաղամասը շահագործման հանձնելուց ի վեր, 9-րդ եւ 10-րդ թաղամասերի 2 շենքերի եւ 90 տոքեջների բնակիչները գազ չեն ունեցել: Այդ հարցով բազմիցս դիմել են տարբեր այցելուների, ընդհուպ մինչեւ Ազգային ժողով ու հանրապետության նախագահին: Միջոցների բացակայության պատճառով հարցի լուծումը միշտ ձգձգվել է, բայց կառավարության ֆինանսավորմամբ մինչեւ տարեվերջ կավարտվեն աշխատանքները, եւ թաղամասի բնակիչները գազաֆիկացված բնակարաններում կդիմավորեն Ամանորը:

Կառավարության ֆինանսավորմամբ Չարենցավանում իրականացվում է նաեւ հարթ տանիքների վերանորոգում: Քաղաքապետ Հակոբ Շահգալդյանի խոսքով՝ հարթ տանիքի վերանորոգման խնդիր կար 43-45 շենքերում, իրենց ներկայացրած ծրագիրը 80 մլն դրամ արժողությամբ էր, սակայն կառավարությունը հատկացրել է 60 մլն, ինչը հերիքելու է միայն 35 շենքի տանիք վերանորոգելու համար: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր շենքից 200.000 դրամ գումար է հավաքվում՝ որոշ բնակիչների սեփական ներդրում՝ այդ միջոցներով շենքերի ցանկը հնարավորինս ընդլայնելու համար: Այդուհանդերձ, դա սիստեմաբար չի կատարվում եւ, անկախ գումարի հավաքագրումից, ցանկում ընդգրկված 35 շենքերի հարթ տանիքները վերանորոգվելու են: Քաղաքապետը նշեց, որ առայժմ գումար է հավաքել 6 շենք, իսկ հավաքված գումարն իրենք կարող են ծախսել միմիայն տանիքների համար:

Ինչ վերաբերում է ծրագրային առաջարկների ձեւավորմանը, ապա Հ. Շահգալդյանը նշեց, որ ինքն է դրանք առաջարկել, խնդրի հետ կապված համայնքային որեւէ ժողով չի եղել, պարզապես ժողովրդի հետ իր ամենօրյա շփումից առանձնացրել է համայնքի այդ երեք կարեւորագույն խնդիրները: «Ամեն օր կազմակերպվող ընդունելությունների ժամանակ 10 բնակչից 2-ն այդ հարցն են բարձրացնում»,- ասաց քաղաքապետը:

Տես էջ 7

Ծրագրերն իրականացվում են կասկածելի որակով

Նոյեմբերյան քաղաքում ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ 3 ծրագիր է իրականացվում: Նոյեմբերյանի քաղաքապետ Սերյոժա Ամիրաղյանը գոհ է, որ պետական բյուջեի գումարներով սահմանամերձ քաղաքում նշանակալից գործ է արվում:

Ծրագրերից մեկով վերակառուցվելու է քաղաքի ֆուտբոլի մարզադաշտը: Մարզադաշտին կից կառուցվելու է 27 մ երկարությամբ եւ 6 մ լայնությամբ երկհարկանի շինություն, որտեղ կլինեն հանդերձարաններ, երկու փոքր մարզադահլիճ: Կառույցի երրորդ հարկը բաց է լինելու՝ բարձր տանիքի ներքո, օթյակի նման, որտեղից կիսեսեն ֆուտբոլային հանդիպումներին: Խաղադաշտը 6 մետր ընդլայնվելու է, համապատասխանեցվելու ֆուտբոլային մարզադաշտերի միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին, կառուցվելու է նաեւ խաղադաշտի նոր հենապատ: Այս նպատակով հատկացվել է 50 մլն դրամ, 48 մլն դրամով շինարարության մրցույթը շահել է Իջեւանի «Հայկ եւ որդիներ» արտադրական կոոպերատիվը: Շինարարությունը նախատեսված է ավարտել ընթացիկ տարում:

Պետբյուջեից 21.1 մլն դրամ հատկացվել է բազմաբնակարան 4 շենքերի տանիքների նորոգմանը: Քաղաքի 19 բազմաբնակարան շենքերից ընտրվել են առավել հին 4 շենքեր: 3 շենքի տանիքի հին ազբոշիֆերները փոխարինվել են նոր ցինկապատ թիթեղներով, 4-րդի տանիքի նորոգումն ընթացքի մեջ է: Աշխատանքները կատարում է նույն ձեռնարկությունը՝ «Հայկ եւ որդիներ» արտադրական կոոպերատիվը: Նոյեմբերյանի քաղաքապետն ասում է, որ տանիքների հին շիֆերների մեջ էլեն են ամբողջական եւ անվնաս լինում, պիտանիներն իրենք հատկացնում են քաղաքի բազմաբնակարան մյուս շենքերի վերջին հարկերի այն կարիքավոր բնակիչներին, ում տանիքը վնասված է: Ի դեպ, այս հին շիֆերներից տրամադրել են նաեւ քաղաքապետարանի վարչական շենքի տանիքի համար:

Քաղաքում իրականացվող 3-րդ ծրագիրը գերեզմանատուն տանող ճանապարհի նորոգումն է: Աշխատանքներն իրականացնում է ճանապարհաշինության մեջ մեծ փորձ ունեցող Նոյեմբերյանի «Լետն երկրորդ» ՍՊԸ-ն: Այս աշխատանքների համար հատկացվել է 23 մլն դրամ: 350-400 գնամետր ամբողջությամբ ասֆալտապատվել է, մնացած հատվածում՝ քաղաքի կենտրոնից մինչեւ գերեզմանատուն, ուրաջ 3 կմ ճանապարհահատվածում փոսային նորոգումներ են կատարվել: Վերանորոգման աշխատանքներն արդեն կատարված են, այս ծրագրով նաեւ ճանապարհի հենապատեր կկառուցվեն: Աշխատանքներին խանգարում են անընդհատ տեղացող անձրեւները:

«Ինչպե՞ս է որոշվել, օրինակ, ծրագրում ընդգրկել քաղաքային մարզադաշտի կառուցապատումը»,- մեր հարցին ի պատասխան՝ քաղաքապետ Ս. Ամիրաղյանը տեղեկացրեց, որ օգոստոսի 5-ին վարչապետ Սերժ Սարգսյանն այցելել է սահմանամերձ Կոթի գյուղ: Այցն ավարտելով՝ վարչապետը ուղղաթիռով Երեւան պետք է վերադառնար Նոյեմբերյանի մարզադաշտից: «Այդ ժամանակ ես խնդրեցի քաղաքի կենտրոնում գտնվող մարզադաշտը նորոգելու համար 50 մլն դրամ հատկացնել»,- պարզաբանում է Սերյոժա Ամիրաղյանը: Նրա խոսքերով՝ մարզադաշտի հարակից տարածքը բարեկարգելու, կառուցապատելու համար նախկինում իրենք ավելի մեծ ծրագիր էին պատրաստել: Սակայն դրա նախահաշվային արժեքը մեծ է եւ ներկայումս հնարավոր չէ իրականացնել: «Համայնքի ավագանին արդյո՞ք համաձայն կամ իրազեկ է, որ նշված ծրագրերը եւ ոչ թե այլ նախագծեր պետբյուջեի ֆինանսավորմամբ կյանքի կոչվեն»,- մեր մյուս հարցին քաղաքապետը պատասխանեց, որ իրականացվող ծրագրերի հրատարակությունը բազմիցս քննարկվել է ավագանու նիստերում, համայնքի ավագանու անդամները տեղյակ են, սակայն նշված առաջնահերթ ծրագրերը ավագանու հաստատմանը ներկայացնելու կարիք չի եղել:

Տանիքները նորոգելիս շինարարները «հոնքը շինելու տեղ աչքն էլ են հանել»

Սերյոժա Ամիրաղյանը գոհ է կատարված աշխատանքների որակից, 3 շենքերի տանիքները ժամանակին են նորոգվել, իսկ մարզադաշտի կառուցապատումը ձգձգվում է անձրեւների պատճառով, եւ այս պայմաններում հնարավոր չէ հողային աշխատանքներ կատարել: Քաղաքապետը մտավախություն ունի, որ մարզադաշտի կառուցապատման ծրագիրը սահմանված ժամկետում չի ավարտվի:

Մարզադաշտի վերակառուցումը պիտի ավարտվեր դեկտեմբերին, բայց այն դեռեւս չի սկսվել

Նոյեմբերյան քաղաքի փողոցներում անցկացրած մեր հարցումները վկայեցին, որ բնակիչները հավանություն են տալիս քաղաքային գերեզմանատան ճանապարհի եւ բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգման ընդգրկմանը պետբյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրում: Զորավար Անդրանիկ փողոցի 2-րդ շենքի տանիքը, որը վերանորոգվում էր այս ծրագրի շրջանակում, շինարարները մեկ շաբաթ առաջ ավարտված են համարել:

Շենքի 3-րդ հարկի բնակիչ Գագիկ Գիշյանի բնակարանի առաստաղը նորոգումից հետո բազում տեղերից վնասվել է: Գագիկի կինը՝ Զարինեն, պատմեց, որ շինարարները նորոգման համար հին տանիքը քանդել, հեռացել են: Գիշերը հորդ անձրեւն ամբողջությամբ տուն է լցվել: Նման պատկեր էր նաեւ նրա հարեւանուհու՝ Մարինե Ամիրաղյանի բնակարանում: Երկրորդ հարկ ներթափանցած անձրեւը վնասներ էր պատճառել նաեւ նրանց բնակարանին: Այդ բնակարանի սեփականատեր Արտիկ Աբովյանը, սակայն, մեզ մատնացույց արեց քաղաքի կենտրոնական երկու փողոցների խաչմերուկում գտնվող շենքի ճակատից հոսող անձրեւաջուրը: Շինարարները տանիքը նորոգելուց հետո հին ջրհորդանները չեն փոխել, նույնիսկ նեղություն չեն քաշել տանիքում հավաքվող ջուրը միացնել ջրհորդանին:

Տխուր պատկեր էր նաեւ քաղաքային մարզադաշտում: Դաշտում, աշնանային թանձր մառախուղում երեւում են հողի մեծ կույտեր եւ կուտակված տուֆ քար, ինչը հուշում է, որ այստեղ երբեւէ շինարարություն է լինելու: Անտղելի լավատես պետք է լինել՝ հավատալու համար, թե այստեղ մինչեւ տարեվերջ շինարարությունը կավարտվի, երբ այն դեռեւս չի սկսվել:

Առավել ուշագրավ է այն փաստը, որ շենքերի տանիքների նորոգումը հիմնականում կատարում էին ոչ թե Իջեւանի «Հայկ եւ որդիներ» ձեռնարկության աշխատողները, այլ, մեծամասամբ, Նոյեմբերյան քաղաքի բնակիչները: Վերջիններիս մեջ թիթեղագործների հետ միասին կային նաեւ նորոգվող շենքերի բնակիչներ: Օրինակ՝ անձրեւից թաց տանիքի վրա հայտնվել էին 60-ամյա անաստող մի տղամարդ եւ կրտակի աշխատող: Նրանց տեսնելով՝ կարծեցի, թե «հայրենասիրական մղումից» են բարձրացել իրենց քառահարկ շենքի տանիքը, որպեսզի օգնեն նորոգողներին: Սակայն պարզվեց, որ այդ մարդիկ պարզապես օրավարձով են աշխատում:

Պետական գնումների գործակալությունում անցկացվող շինարարական մրցույթները կասկածների տեղիք են տալիս: Պատահական չի կարելի համարել, որ մարզպետարանի վերահսկողությամբ իրականացվող շինարարական 2 ծրագիրն էլ իրականացնում է Իջեւանի ձեռնարկությունը: Դա այն դեպքում, երբ Նոյեմբերյանը Իջեւանից բաժանվում է Ադրբեջանի հետ սահմանագծով եւ 70 կմ հեռավորությամբ, ինչը դժվարացնում է շինարարական տեխնիկայի եւ աշխատուժի տեղափոխումը, ինչպես վերեւում նշեցի, հիմնականում տեղացիներն են կատարում: Ընդհանրապես, պետբյուջեից այս գումարների հատկացումներն ուշ են կատարվել, եւ ձմռան շեմին դժվար է շինարարություն կատարել:

Նոյեմբերյան քաղաքում մեր հարցման ժամանակ մի կրտակավար իրականացվող ծրագրերի վերաբերյալ ասաց. «Առջեւում նախագահական ընտրություններ են»: Նա զգուշացավ անվանապես ներկայանալ. «Ինչ ես ասում, իսկույն կրտակս կփակեն»:

ՈՍԿԵՆ ՄԱՐԳԱՅԵՆ

Փոքրիկ Լուսաձոր՝ գոյատեւման բյուջեով

Տավուշի մարզկենտրոն Իջեւանից շուրջ 5 կմ հեռավորությամբ 728 բնակիչ ունեցող Լուսաձոր համայնքն է: Գեղատեսիլ տեղանքում գտնվող, անտառի բարիքներից առատորեն օգտվող շենը մինչեւ 1931 թվականը կոչվել է Խավարաձոր: Այդ տարի Աղստեւ գետի վրա գործարկված հիդրաէլեկտրակայանը տարածաշրջանում առաջինը հոսանք ու լույս տվեց այս գյուղին, եւ այն վերանվանվեց Լուսաձոր: Համայնքապետարանի համեստ շենքի ճակատին Հայաստանի Հանրապետական կուսակցության մեծ խորհրդանիշն է:

«Իսկ համայնքապետարանի ցուցանակն ո՞ւր է»,- հարցնում եմ համայնքապետ Սուրեն Քոչարյանին, ով, ի դեպ, անկուսակցական է: Նա ասում է, որ մի ամիս առաջ ուժեղ քամին ցուցանակը պոկել-ջարդել է: Համայնքապետը վկայում է, որ վերջին երկու ամսում Լուսաձորում բավականաչափ գործ է կատարվել. ՄԱԿ-ի Զարգացման գրասենյակի հետ համատեղ 57 հա աշնանացան է արվել, նոյեմբերի վերջին գյուղում կավարտվեն գազաֆիկացման աշխատանքները: Համայնքն այդ աշխատանքներում 2.3 կմ խողովակ է ներդրել, 1 կմ-ը՝ 76 մմ եւ 1.3 կմ-ը՝ 57 մմ տրամագծով: Նույն ծրագրով՝ Իտալիայի կառավարության աջակցությամբ, գյուղում 5500 արքայանարինջ կտնկվի. յուրաքանչյուր տնտեսության, ըստ ցանկության, անվճար տրվել է 5-10 տնկի, նախատեսված է նաեւ համայնքի բնակիչներին պատկանող ինքնահոս եղանակով ոռոգելի հողերում 10 հա արքայանարնջի այգու հիմնումը: Պատրաստ է խմելու ջրագծի 6 կմ ներհամայնքային ցանցի կառուցման նախագիծը: Այս գործում համայնքը ներդնում է 200 խմ տարողությամբ ամբարտակ, որը կառուցվել է խորհրդային տարիներին, սակայն ջրագծի չգործելու պատճառով պարապուրդի էր մատնված: Ընթացքի մեջ է Մթնաձոր գետից մոտ 2 կմ երկարությամբ ինքնահոս ջրատարի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստումը: Այդ ջրագծի միջոցով ներկայումս ոռոգվող 50 հա հողերը կոռոգվեն անմիջապես ջրատարի խողովակներից, ինչը կիսով չափ կնվազեցնի ոռոգման ջրի կորուստները:

Սուղ բյուջեի նվազ հավաքագրումը կամ չօգտագործվող հնարավորություններ

126 հա սեփականաշնորհված եւ 32 հա համայնքային վարելահող, 43 հա տնամերձ եւ 187 հա արոտավայր ունեցող համայնքի, ադառոի հետ միասին՝ 2 միլիոն 230 հազար դրամի հավաքագրում: Նոյեմբերի 1-ի դրությամբ ադառոի հետ միասին հավաքագրվել է ընդամենը 920 հազար դրամ: Գյուղի 187 հա արոտավայրերը գյուղացիներն օգտագործում են առանց պայմանագրերի եւ, բնականաբար, առանց վարձավճարի: Համայնքապետն ասում է, որ դրանք քարքարոտ են: Սակայն համայնքի ավագանու որոշումներից մեկով «Բնական պաշարների կառավարման եւ չքավորության նվազեցման ծրագրի» շրջանակներում այդ քարքարոտ արոտավայրերում 15 հա տարածք ազոտական, ֆոսֆորական եւ կալիումական պարարտանյութերով, տրակտորով «պարարտացրել են»: Գյուղի բնակիչներից Սուրեն Սարդարյանը գյուղամիջում մեզ հետ զրույցի ժամանակ, որին ներկա էր նաեւ համայնքապետը, ասաց, որ գյուղում արոտավայրերի պարարտացում ընդհանրապես չի եղել:

Համայնքապետարանի ճակատին ՀՀ դրոշի ու գերբի փոխարեն ՀՀԿ ցուցանակն է

Մասնակցային գործընթաց

Համայնքապետը հավաստում է, որ գյուղում իրականացվող բոլոր ծրագրերի մասին լուսաձորցիները լավատեղյակ են, դրանք որոշվել են համայնքի ընդհանուր ժողովում, բնակիչների առաջարկով: Գյուղական զարգացման ծրագրի մեկնարկին կայացել է ծրագրի վերաբերյալ համայնքի ժողով, որից հետո ընտրվել են ֆոկուս խմբերը: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից թերթիկներ են բաժանվել, եւ ցանկացողները գյուղի ներկայի եւ ապագայի մասին իրենց պատկերացումները հանձնել են «նամակով»: Լուսաձորի ապագայի լավագույն տեսլականը ներկայացրած 5 հոգի արժանացել է հուշանվերի՝ մարզաբամիկ, բաժակ: Համայնքապետն ասում է, որ կատարվող ծրագրերի վերաբերյալ մի քանի անգամ համայնքի ընդհանուր ժողով է անցկացրել: Երբ խնդրեցինք տրամադրել այդ ժողովների արձանագրությունները, պրն Քոչարյանը պատասխանեց. «Քանի որ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրից ներկա են եղել, բոլոր արձանագրություններն իրենց մոտ են, մեզ մոտ դրանք չկան: Դրանց հիման վրա կազմվել է համայնքի 2007-08 թթ. զարգացման համալիր ծրագիրը»: Հարց է ծագում՝ այդ ժողովներում բարձրացված հարցերը, դրանց լուծման համար արված առաջարկները միայն ՄԱԿ-ի Զարգացման գրասենյակին են հարկավո՞ր, թե՞ առաջին հերթին՝ համայնքին:

ՈՍԿԵՆ ՄԱՐԳԱՅԵՆ

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Լոռի-Կոտայք

Համայնքային զարգացման ծրագրերն ընտրում եւ իրականացնում են մարզպետները

ՀՀ կառավարության որոշմամբ մարզերում առկա առաջնահերթ խնդիրների լուծման նպատակով 2007 թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Լոռու մարզին հատկացվել է 1 մլրդ 248 մլն 770 հազար դրամ:

Մարզի Թումանյանի տարածաշրջանի 12 համայնքներին Լոռու մարզպետարանն այդ գումարից տվել է 255,6 մլն դրամ, որն, ըստ մարզպետարանի ֆինանսական վարչության պետ Սեւակ Հովհաննիսյանի, հատկացվել է Ալավերդի, Ախթալա, Շամլուղ, Թումանյան քաղաքներին եւ Օձուն, Նեղոց, Կարմիր Աղեգի, Այգեհատ, Մեծ Այրում, Շամուտ, Արդվի, Ճոճկան գյուղերին:

Զավեշտական է, որ համայնքների սեփականությունը հանդիսացող ոչ բնակելի շենքերի ու այլ տարածքների առ այսօր իրականացվող խայտառակ առք ու վաճառքին, համայնքային բյուջեներում իրականացվող կոռուպցիային տարիներ շարունակ անտարբեր ՀՀ կառավարությունը, նախագահական ընտրությունների շեմին, համայնքների հիմնախնդիրների նկատմամբ ցուցադրական հոգատարություն դրսեւորում է, որը, բնականաբար, բխում է նախընտրական շահագրգռություններից: Ծրագրում ներառված աշխատանքները ներկայացվել են համայնքապետերի առաջարկությամբ, թեեւ նրանք, սովորույթի համաձայն, ոլանավորվող աշխատանքների առաջնահերթությունը որոշելու համար չեն խորհրդակցել համայնքների բնակիչների հետ: Այդտեղ, դրանցից բնակելի շենքերի տանիքների վերանորոգումը կարելի է դասել առաջնահերթ խնդիրների շարքին:

Ներհամայնքային ճանապարհների ծրագրով նախատեսված փոսալցումներին բնակչությունը հումորով է վերաբերվում՝ դրանք համարելով փող լվանալու լավագույն միջոց: Համայնքներում նախատեսված աշխատանքների համար որոշես պատվիրատու հանդես են գալիս ոչ թե ծրագրի մեջ ընդգրկված համայնքապետարանները, այլ մարզպետարանը, որն էլ կատարված աշխատանքների դիմաց փոխանցում է գումարը: Եթե մարզպետարանի ենթակայության տակ գտնվող դպրոցների վերանորոգման դեպքում դա հասկանալի է, արդեն համայնքային ենթակայության ճանապարհների ու շենքերի տանիքներին հատկացված գումարները, որի տնօրինողը մարզպետարանն է, համայնքապետերի անթափույց դժգոհություն է առաջացրել, համայնքներում ամենատարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել: Թե որքան գումար է հատկացրել մարզպետարանը ծրագրի շրջանակներում իր ղեկավարած համայնքին, Թումանյան քաղաքի քաղաքապետ Լյովա Զավարյանը դժկամորեն ասաց. «Ես չգիտեմ, այդ գումարի տերը ես չեմ, տեղյակ չեմ»: Հետո ավելացրեց՝ 52 մլն դրամ:

Նրանից մի կերպ կարողացանք նաեւ կորզել, որ նշված գումարը հատկացված է Թումանյան քաղաքի 1,5 կմ ճանապարհահատվածի վերանորոգմանը, որն իրականացնելու է Ալավերդիում գրանցված «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ն: Քաղաքապետի տվյալներով՝ 30 մլն դրամ է հատկացվել Թումանյան քաղաքի շենքերից մեկի կապիտալ վերանորոգման համար, որն իրականացնելու է «Վալա» շինարարական կազմակերպությունը: Թե դա ինչ կազմակերպություն է եւ որտե՞ղ է գրանցված, քաղաքապետը տեղյակ չէ:

«Ինչո՞ւ է ներհամայնքային ճանապարհների եւ շենքերի վերանորոգման գումարները տնօրինում մարզպետը եւ ոչ համայնքապետերը» հարցին ի պատասխան՝ Լ. Զավարյանն ասաց. «Կարո՞ղ է ես կառավարության անդամ եմ, տենդերն իրենք արել են, մարդիկ էլ գործ են անում»:

Ծրագրով իր ղեկավարած համայնքին հատկացված գումարից եւ նախատեսված աշխատանքներից անտեղյակ էր Մեծ Այրում գյուղի համայնքապետ Պարիկ Առուբանյանը: «Չգիտեմ, տեղյակ չեմ, վերջերս 1,4 մլն դրամ են տվել, որը փոխանցել եմ գազի համար, կարող է դա լինի, չէ, չգիտեմ, տեղյակ չեմ»,- ասաց նա:

Ակնհայտ է, որ վարչապետ Սերժ Սարգսյանը քաջատեղյակ է «աչքից սուտմա թռցնող» համայնքապետերի՝ փողերը ծախսելու գործելակերպին եւ իր համար վճռական այս պահին չի վստահում ու շրջանցում է նրանց: Այս հարցի կապակցությամբ «Լոռու մարզ» թերթին տված իր պարզաբանումներում (տես՝ «Լոռու մարզ» թերթ 27.10.07թ. թիվ 84(10168)) մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Վալերի Անտոնյանը հայտնում է, որ ծրագրով նախատեսված աշխատանքներն արդեն սկսվել են, հոկտեմբերի 5-ին ավարտվել է մրցույթների անցկացումը, ընտրված են շինարարական այն կազմակերպությունները, որոնք պետք է կատարեն նախատեսված աշխատանքները:

Այդտեղ, քաղաքաշինության վարչության պետի լավատեսությունը նախատեսված աշխատանքների մեկնարկի մասին, պարզվում է, այնքան էլ հիմնավոր չեն: Օրինակ՝ Ճոճկան գյուղի համայնքապետ Վարուժան Թամազյանն այս կապակցությամբ ասաց. «Ես մարզպետի հետ խոսել եմ Նոյեմբերյանի հատվածից, Արճիս գյուղի տակից Ճոճկան եկող երկաստիճան ջրհան կայանի վերանորոգման մասին, որի սարքավորումները հինգ տարի առաջ գողացել են՝ գյուղի 300 հա վարելահողերը զրկելով ոռոգումից: Մարզպետն ինձ ասել է, որ ջրհան կայանի ղեկավարությանը ուղարկեմ իր մոտ: Նրանք պետք է մասնագիտական ակտ կազմեին, որպեսզի այն մտցվեր ծրագրի մեջ: Ուղարկել եմ, սակայն առայժմ ոչինչ չի կատարվել»:

Ախթալայի քաղաքապետ Սուրեն Թամազյանն ակնհայտ դժկամությամբ ասաց, որ ինքը մարզպետարանին Ախթալա քաղաքի 50 շենքերի տանիքների վերանորոգման առաջարկություն է ներկայացրել, սակայն նախատեսել են 6-ը. «Իսկ կամուրջը նախապես եմ դիմել, հիմա են մտցրել»: Թե նրա կողմից նախապես ներկայացված կամուրջի վերակառուցումը, առանց իրեն տեղեկացնելու, ում հիշեցմամբ ու նախաձեռնությամբ է մտցվել ծրագրի մեջ, քաղաքապետը չասաց: Ս. Թամազյանը նաեւ տեղեկացրեց, որ Ախթալայի ներհամայնքային ճանապարհների վերանորոգման համար հատկացվել է 30 մլն դրամ, 6 շենքերի տանիքների վերանորոգման համար՝ 24 մլն դրամ, Բարիս քաղաքամասի Օրջոնիկիձեի 1 շենքի բակի հարեւանությամբ գտնվող շուրջ 12մ երկարությամբ եւ 7մ լայնությամբ կամրջի վերակառուցման համար՝ 28մլն դրամ: Կամրջի վերանորոգման աշխատանքների համար հատկացվել է 86 հազար դոլար: Օրջոնիկիձեի 1 շենքի բնակիչները հայտնեցին, որ կամրջի շինարարական աշխատանքները սկսվել են այս տարվա սեպտեմբերի 15-ից, սակայն երկու ամիս է չեն ավարտվում:

«Հիմա էլ սպասում ենք բալկեին»,- ասացին բնակիչները: Կամրջի տակ հեղեղատարի կենտրոնում ընկած էր 8 խմ երկաթբետոնե հին կամրջի հսկա հենասյունը. ըստ բնակիչների՝ շինարարները հրաժարվում են հանել հեղեղատարից՝ պատճառաբանելով, թե շատ դիզվառելիք կծախսվի: Մինչդեռ բնակիչներն անհանգստանում էին, որ հենասյունը գարնան հեղեղումների ժամանակ կպատնեշի հեղեղների անարգել հոսքը, որի հետեւանքով կհեղեղվեն շենքերի բակերն ու ճանապարհները: Կամրջի շինարարությունն իրականացնող «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ի նախագահ Սանասար Տիտանյանը հայտնեց, որ երկաթբետոնե զանգվածի՝ հեղեղատարից հանումը շինարարական աշխատանքներում չի նախատեսված, այդ պատճառով էլ շինարարներն այն ընդամենը փոքրացրել են: Նա նաեւ ասաց, որ ծրագրով նախատեսված աշխատանքները գտնվում են ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի անմիջական հսկողության տակ, որեւէ համայնքապետ գործին չի մասնակցում, ու չնայած կատարվող փոսալցումների նկատմամբ բնակչության անվստահությանը՝ դրանք կատարվելու են մաքուր ծախսումներով: Ս. Տիտանյանը տեղեկացրեց, որ չնայած փոսալցումների հսկայածավալ ծանակին՝ նրանք նոյեմբերի 5-ին ավարտելու են Թումանյան քաղաքի ճանապարհների փոսալցումների աշխատանքները, երկու օրից կավարտվեն Ալավերդու Սարահարթ թաղամասի Մեսալուտգների եւ քաղաքի Փիրուզյան փողոցների վերանորոգման աշխատանքները եւ կսկսվեն Ախթալա քաղաքի փողոցների լայնածավալ աշխատանքները: Ալավերդու քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Գագիկ Սոխակյանն էլ հայտնեց, որ Ալավերդու քաղաքապետարանին հատկացվել է 90 մլն դրամ, որից 61,մլն դրամն ուղղվել է քաղաքի 10 բարձրահարկ շենքերի հարթ տանիքների վերանորոգմանը, 19 մլն դրամը՝ ներքաղաքային ճանապարհների փոսալցումներին: «Աշխատանքները նորմալ են ընթանում»,- հայտնեց նա:

ԱԲԻՍԱ ՓԱՐՆՄՈՒՇՅԱՆ

Ո՞վ է որոշում համայնքի առաջնահերթ խնդիրը

Բ էջից

«Մեր է չարենցավանցիների թիվ մեկ խնդիրը»,- մեր հարցին բնակիչները սոցիալական բնույթի խնդիրների, գործազրկության կողքին նշեցին բնակֆոնդի պահպանումն ու ասֆալտապատումը:

3500 բնակիչ ունեցող Արգել գյուղում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների թվում նշում էին ջուրը, տանիքները, ճանապարհները: Կառավարությունը 30 մլն դրամ է հատկացրել գյուղին «Արգելի միջն. դպրոցի հիմնանորոգում» ծրագիրն իրագործելու համար: Սակայն, համայնքապետ Մաթեւոս Ավագյանի ասելով, այդտեղ թյուրիմացություն է եղել: «30 մլն-ն ամբողջությամբ ասֆալտապատմանն է հատկացվել: Ուղղակի ինձ հարցրին, թե ո՞ր ճանապարհի մասին է խոսքը, ես ասացի՝ դպրոցի ճանապարհը: «Դպրոց» բառը շեշտվեց «ճանապարհի» իմաստով, բայց, չգիտես ինչու, այն վերափոխվեց դպրոցի վերանորոգման ծրագրի»: Համայնքապետի տեղեկացմամբ՝ գյուղի դպրոցն ընդգրկված է պետբյուջեի հաջորդ տարվա կապիտալ վերանորոգման ծրագրում եւ, այսպես թե այնպես, այդ աշխատանքները կատարվելու են: Իհարկե, հետո ճշտվեց, որ թյուրիմացություն է տեղի ունեցել, բայց, բոլոր դեպքերում, այդ գումարից 8 մլն դրամը հատկացվեց դպրոցի վերանորոգմանը: Արգելի Վ. Անանյանի անվան միջն. դպրոցում ներկայումս վերանորոգման աշխատանքներ են կատարվում, նորոգվում է շքամուտը, փոխվել են մուտքի դռները ու պատուհանները:

Կոտայքի մարզպետարանի Տեղական ինքնակառավարման մարմինների հանրապետական գործադիր մարմինների գործունեության համակարգման վարչության պետ Սամվել Հակոբյանը համամիտ չէր Արգելի համայնքապետի հետ: Նրա ասելով՝ Արգելում ճանապարհը շատ անմխիթար վիճակում էր, բայց որպեսզի այն չմերժվի, կապել են դպրոցի հետ, քանի որ աշակերտներն այդ ճանապարհով են դպրոց գնում:

Ասֆալտապատման աշխատանքներն արդեն ավարտվել են: Ընդհանուր առմամբ, ասֆալտապատվել է 2700 քմ ճանապարհ (22 մլն դրամ): Սակայն գումարը չի բավականացրել ողջ աշխատանքն ավարտելու համար, եւ դպրոցի առջեւում գտնվող մոտ 700 քմ հատվածը մնացել է առանց ասֆալտապատման: «8 մլն-ը կտրեցին, այդ պատճառով էլ գումարը չբավականացրեց: Այդ հատվածը փոսային նորոգման ձեւով արվելու է, բացի այդ, մարզպետը խոստացել է օժանդակել, որ գոնե 6 մ երկարությամբ հատված ճանապարհի տեսքով ասֆալտապատվի»,- նշեց Արգելի համայնքապետը: Մինչդեռ վարչության պետը նշեց, որ իրենք հետեւողական են լինելու եւ համայնքին պարտադրելու են ավարտին հասցնել աշխատանքները:

Ինչ վերաբերում է ծրագրի ընտրությանն ու դրա ներկայացմանը, ապա, Մ. Ավագյանի հավաստմամբ, ճանապարհի հետ կապված միշտ էլ բողոքներ ու խնդրանքներ ստացել է համայնքի բնակիչներից: Այն դպրոց տանող ճանապարհն է, թաղամասը նույնպես խիտ բնակեցված է, բացի այդ, նշված ճանապարհով են գերեզմանոց գնում: Հատկապես անձրեւների ժամանակ այն անանցանելի էր դառնում:

Այն, որ գյուղը կառավարության կողմից ֆինանսական օժանդակություն է ստացել, զարմացրեց գյուղացիներից շատերին: Իրենց առաջնահերթ խնդիրների թվում նրանք նշեցին խմելու, ոռոգման ջրի, տանիքների վերանորոգման մասին: Մեր հարցին, թե ճանապարհի հետ կապված դժգոհություններ ունե՞ն, արգելցի տարեց մի կին ասաց, որ համայնքապետն արդեն սարքել է ճանապարհը, եւ իր գոհունակությունը հայտնեց: Իսկ դպրոցահասակ երեխաների մայրը, ով նույնպես անտեղյակ էր ծրագրից, նշեց, որ ամեն տարի ոռոգման ջուրը ողողում էր դպրոց տանող ճանապարհը, ու այն անանցանելի էր դառնում:

Խնդիրները շատ են նաեւ ընդամենը 72 մլն բյուջե ունեցող Բյուրեղավան քաղաքում: Փոխքաղաքապետ Էդիկ Պողոսյանի խոսքով՝ իրենք ներբակային ասֆալտապատման եւ տանիքների վերանորոգման ծրագրեր էին ներկայացրել, որոնք մերժվել են: Պատճառաբանվել է, որ համայնքն արդեն ֆինանսավորում է ստացել: Հիշյալ ծրագրով կառավարությունը 40 մլն դրամ է հատկացրել Բյուրեղավանի թիվ 1 դպրոցի հիմնանորոգման համար: «Մենք այդպիսի ծրագիր չենք առաջարկել, տեղյակ չենք»,- հայտնեց փոխքաղաքապետը:

Բյուրեղավանի թիվ 1 դպրոցի տնօրեն Կարինե Խաչիկյանը պատմեց, որ պետբյուջեի միջոցներով դպրոցն արդեն վերանորոգման մեջ է, աշխատանքները սկսվել են մայիս ամսից եւ շարունակվում են: Բացի այդ, «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի էներգախնայողության» հիմնադրամի աջակցությամբ լուծված է նաեւ ջեռուցման խնդիրը: Իսկ կառավարության հատկացրած 40 մլն դրամով ամբողջությամբ հիմնանորոգվելու է մարզադպրոցի մասնաշենքը, կառուցվելու են հանդերձարաններ, պահեստային մաս, սանհանգույց՝ զուգարաններով եւ ցնցուղներով: Տեղադրվել են նաեւ նոր պատուհաններ: Ծրագրի շրջանակներում նորոգվելու են նաեւ դպրոցի 3 մասնաշենքերի տանիքները:

Տնօրենի խոսքով՝ «համայնքում ամենից ահավոր վիճակում իրենց դպրոցն է եղել»: Կ. Խաչիկյանը խոստովանեց, որ ինքը չգիտի, թե ո՞վ է ներկայացրել դպրոցի ծրագիրը, բայց հարցը բազմիցս բարձրացրել է: Բացի այդ, պետբյուջեի հատկացումը չէր բավարարել տանիքների վերանորոգումն իրականացնելու համար: Դպրոցի տնօրենը նախընտրեց չպատասխանել այն հարցին, թե ո՞րն է Բյուրեղավանի թիվ մեկ հիմնախնդիրը: Հարցին պատասխանեց փոխքաղաքապետը՝ ներբակային ասֆալտապատման եւ տանիքների հետ միասին թվարկելով 48 ոռոգիչների գազաֆիկացման, Բ 1 թաղամասում բացակայող կոյուղագծի, երաժշտական, մշակույթի ու մարզադպրոցների հիմնախնդիրները: Է. Պողոսյանը նշեց, որ քաղաքապետարանում ընդունելություններ են կազմակերպվում ամեն օր, եւ բնակիչների գանգատներից ելնելով էլ ձեւավորել էին իրենց առաջարկը: Բյուրեղավանում մեզ հանդիպած պատահական անցորդները համայնքի առաջնային հոգսերից էին համարում հիմնականում բարեկարգման աշխատանքներն ու բնակֆոնդի պահպանումը:

ՍԵՂԱՆ ԳԲԻԳՈՐՅԱՆ

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Նյութը հրատարակվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

EURASIA FOUNDATION

«Ցեղասպանության հայկական պնդումները հյուծում են Թուրքիային»

Խոսքովանում է պաշտոնաթող թուրք դեսպանը Անկարայում հրավիրված միջոցառմանը

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալումն սպառել է թուրքական ժխտողականության դիրքերը: Դա հանգեցրել է այդ գործընթացը հակափայլերով կասեցնելու Թուրքիայի հնարավորությունների սպառմանը: Ժխտողականության դիրքերի եւ կասեցման հնարավորությունների սպառման պայմաններում թուրքական քաղաքական շրջանակները համոզվել են, որ ցեղասպանության միջազգային ճանաչումն անդառնալի է, ինչը նրանց կանգնեցրել է հուսահատության եզրին: Հուսահատությունը ենթադրում է հուսահաս ճիգեր, որոնց գործադրումը դառնում է ցեղասպանության ճանաչման գործընթացին հակադրվող գիտական եւ քաղաքական միջոցառումների անարդյունավետության յուրահատուկ խոսքովանություն Թուրքիայում:

Հայոց ցեղասպանության հարցում թուրքական ժխտողականության դիրքերի սպառումն ու հայկական բանաձեւերին հակադրվող միջոցառումների անարդյունավետությունը խոսքովանելու առումով հատկանշական է «1915-ի իրադարձություններում բուն ճշմարտություններն ու դրանց այսօրվա անդրադարձը» թեմայով Անկարայում հրավիրված «կլոր սեղանը»:

Նոյեմբերի 22-ին «կլոր սեղանը» հրավիրվել է «Բաշքենթ» համալսարանի ռազմավարական կենտրոնի նախաձեռնությամբ: Միջոցառմանն իբրեւ բանախոս մասնակցել են պատգամավոր Ժողովրդա-Հանրապետական կուսակցության պատգամավոր Շյուքրյու Էլեքդաղը, պատգամավոր, Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն Օմեր Էնգին Լյութեմը եւ Թուրքական պատմական ընկերության հայկական ուսումնասիրությունների բաժնի պրոֆ. Քեմալ Չիչեքը:

«Կլոր սեղանը» ելույթով բացել է «Բաշքենթ» համալսարանի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, պրոֆ. Սելջուկ Ուայնը: Նա նշել է, որ բանախոսները ոչ այնքան կանգ կառնեն 1915-ի իրադարձությունների, որքան դրանց առնչությամբ Թուրքիայի ռազմավարության վրա, ավելացնելով. «Տպավորությունն այն է, որ Թուրքիան չունի որդեգրած լուրջ քաղաքականություն «ցեղասպանության» պնդումների դեմ»:

«Բաշքենթ» համալսարանի ռեկտոր, պրոֆ. Մեհմեդ Հաբերալը կանգ է առել 1915-ի իրադարձությունները պատմական ճշմարտությունների լույսի տակ ուսումնասիրելու անհրաժեշտության վրա, իսկ պրոֆ. Ունսալ Յավուզը, որը վարում էր «կլոր սեղանը», համաշխարհային հասարակական կարծիքի վրա ազդելու առումով անբավարար է համարել 1915-ի իրադարձությունների առնչությամբ առ այսօր Թուրքիայում կատարված հրատարակությունները:

Բանախոսներից պրոֆ. Չիչեքը, ամփոփելով 1915-ի իրադարձությունների պատմությունը, հայկական լոբբին խիստ կազմակերպված է համարել աշխարհում եւ մատնանշել, որ դա ուժը պայմանավորված է ոչ թե Հայաստանի, այլ օտարերկրյա աջակցությամբ: Նա միաժամանակ զգուշացրել է, որ ցեղասպանության պնդումներում հայկական կողմի նպատակը Թուրքիայի պարզունակ ներողությունը չէ, այլ փոխհատուցումն ու հողային պահանջներն են:

Նախկին դեսպան Լյութեմն անդրադարձել է Հայկական հարցի առնչությամբ անցյալում թույլ տրված թյուրիմացություններին, նշել է, որ դրանք միտումնավոր չեն եղել, ցեղասպանության հայկական պնդումներն ի հայտ են եկել 50-ականներին, Թուրքիան դրանց նկատմամբ աչալուրջ չի եղել, այդ պնդումներին արձագանքել է 80-ականներին միայն եւ հասել որոշակի հաջողության:

Այնուհետեւ Լյութեմն ընդգծել է. «Հայկական հարցը միջազգային բնույթ է ստացել այն ժամանակ, երբ դադարել է ԱՍԱԼԱ-ի ահաբեկչությունը: Նա Թուրքիայի հետագա քայլերին անդրադառնալիս ճանաչման դեմ առաջարկել է երկկողմ պայքար: Միջազգային ասպարեզում այդ պայքարը պետք է ենթադրի պատժամիջոցների կիրառումը ցեղասպանությունը ճանաչող երկրների դեմ, պայմանով, որ դրանք, ըստ Լյութեմի, ելնեն որոշակի սկզբունքներից: Իսկ գիտական ասպարեզում, վերջինի կարծիքով, պետք է վեղուծական քննադատության ենթարկել հայ հեղինակների որոշ աշխատությունները, որպեսզի հնարավոր լինի հերքել ցեղասպանության հայկական պնդումները:

Վերջում Լյութեմն ավելացրել է. «Չպետք է մտածել, որ առաջարկվող միջոցառումները կարճ ժամանակահատվածում արդյունք կտան: Այս անելանելի իրավիճակում մենք հայտնվել ենք տարիների վաղեմություն ունեցող գործընթացի հետեւանքով, ուստի դրանից ձերբազատվելու համար եւս տարիներ են պահանջվելու»:

Նախկին դեսպան Էլեքդաղն իր ելույթում ընդգծել է. «92 տարի շարունակ առաջ քաշվող ցեղասպանության հայկական պնդումները քաղաքական եւ տնտեսական առումներով հյուծում են Թուրքիային»: Նա նշել է, որ այդ պնդումների հիմքում մեծ Հայաստանի կերտումն է, թեեւ Թուրքիան բացելով արխիվները, համատեղ ուսումնասիրության պատրաստակամություն է հայտնել, սակայն ձեռք բերված արդյունքներն ամենեւին մխիթարական չեն իրենց համար:

Էլեքդաղի հավաստմամբ, Հայկական հարցը հանգեցրել է քարոզչական պատերազմի, աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցների եւ համաշխարհային հասարակական կարծիքի վրա ազդելու առումով թուրքական կողմն այս պատերազմում զիջում է հայկականին, ինչի հետեւանքով հայկական կողմը ձեռք է բերել քաղաքական նոր դիրքեր, որոնց հակակշռումը Թուրքիային չի հաջողվում:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Կարմիր խաչի նախագահը հրաժարական տվեց ծառայողական սիրավեպի պատճառով

Ամերիկյան Կարմիր խաչի նախագահ Մարկ Էվերսոնը երեկ սիրվեպ թողել է պաշտոնը իր ենթականերից մեկի հետ «անձնական հարաբերությունների» պատճառով:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ Էվերսոնն իր պաշտոնն սանձնել էր մի քանի ամիս առաջ՝ մայիսի 29-ին: Կազմակերպության ղեկավարության անդամներից մեկն օրերս տնօրենների խորհրդին հայտնել էր, որ 53-ամյա նախագահը (որն ունի կին եւ երկու զավակ) սիրավեպ է սկսել Կարմիր խաչի մի աշխատակցուհու հետ, որի անունը չի հրապարակվում:

«Ես հրաժարական եմ տալիս անձնական եւ ընտանեկան պատճառներով: Խորապես ափսոսում եմ, որ չեմ կարող շարունակել իմ աշխատանքը», հայտարարել է Մարկ Էվերսոնը, որի գործունեությունից տնօրենների խորհուրդը ընդհանուր առմամբ գոհ է:

Էվերսոնն անցյալում ղեկավարել է ԱՄՆ հարկային վարչությունը: Կարմիր խաչի նախագահի պատասխանատվությունը: Կարմիր խաչի նախագահի պատասխանատվությունը կգտնվի Ամերիկյան Կարմիր խաչի գլխավոր հրավախորհրդատու Մերի Էկլանոն: Վերջինս անցյալում եղել է ԱՄՆ փոստային ծառայության կադրային հարցերի գլխավոր տնօրենի տեղակալը:

Ամերիկյան Կարմիր խաչը վերջին վեց տարում հինգ նախագահ է փոխել: Ներկայումս կազմակերպությունը դժվարին ժամանակներ է ապրում «Կատրինա» ծովամրրիկի պատճառով:

Ապավինում Աստծո նշանի՞ն

Ն. Ադալյանի «Մրջնանոց» վեպը

Նորայր Ադալյանի «Մրջնանոց» վեպը (ՀԳՄ հրատարակչություն, Երեւան, 2006 թ.) շարունակում է հեղինակի կողմից գոյի էկզիստենցիալ ճնշումները: Մրջնանոցը Սահակ մարդու գոյության «միակ դաշտն» է: Վեպ-մենախոսության հերոսները մեկ-երկուսն են: Հերոսի միակությունը գրողին հնարավորություն է տվել կեցությունը հագեցնել անհատակենտրոն հայկանիշներով: Միագծությունը, դիպաշարի «տեղադրույցը», «տեսախցիկի» ուղղումը Սահակի ու Անահիտի վրա, մի յուրահատուկ կյանքի ոլորտներ են ստեղծում: Սահակը եւ Անահիտը առանձին-առանձին միայնակ հերոսներ են: Ըստ Յունգի, միայնակ են բոլոր մարդիկ, քանի դեռ նրանց վրա իշխում է բանականությունը եւ «հաղորդակցման կարիք ամենից շատ զգում է հենց միայնակ մարդը... յուրահանչյուրը հիշում է իր անհատականության մասին եւ իրեն չի նույնացնում ուրիշների հետ»:

Սահակը դեմ է գնում մրջնանոցին, ադավինում իր անհատականությանը, դիմազուրկ հասարակության մեջ հոգեւորի միակ հասատուն հենարանին: Շրջապատը (մրջյուն, օձ, կակղուա, մողես) ենթագիտակցական ասոցիացիա առաջ բերելու շնորհիվ, ընդլայնում է մարդու «գիտակցական ես»-ի սահմանախախտումները:

Սիրո «մոտեցում-հեռացումը» Ադալյանի վիպակառուցվածքի կենտրոնն է, որը ստեղծագործությանը հաղորդում է շարժման ռիթմ:

Լուսաստվերային պոետիկական հնարանը հաղորդականության մեջ է պահում հեղինակ-հերոսի մարդկային ու հասարակական ասելիքը: Մրջնանոցի մռայլ երանգավորումներն ու նորոգակ ճնարակությունը (սիրո հուշերը ենթակա են վերլուծական տրհումների, օտարված հոգեվիճակային զուգորդումների) երկփեղկում են վեպը: Երկլյան է նաեւ հերոս-հեղինակի «ես»-ի ընկալումը՝ «Համլետն էլ Դոն Կիխոտ է, նրանք նույն մարդիկ են տարբեր զգեստների տակ»:

Հերոսն ադամ է կյանքի «ավելի միայնակ» տարբերակ: Իսկ գրողը, պայմանականությունների կառուցվածքում, մնում է կյանքի նյութի հետ: Միջավայրն ամբողջապես փոխաբերականացվել է, որը խորություն է հաղորդում անդիմությանը հակադիր անհատի որոշակիորեն օտարված դրամային: Սահակ Պարթեկյանը իր սեփական դրաման դիտում է անհաղորդ դիրքից («հերոսը գրեթե խոսում-մտածում է իրեն մաս առ մաս ստեղծող հեղինակի պես...»):

Վերջում կերպարը եւ, ստեղծագործական եղանակի առումով՝ հեղինակի գնահատականը կողք կողքի են: Հեղինակը հերոսի հետ եւ նույնանում է, եւ անջատվելով՝ «ուղեկցում» է նրան:



Հերոսը չունի չարություն, թշնամանք, նրա մեջ բացակայում է յունգյան «Սվերի գիտակցումը»: Ցժխտելով չարիքի առկայությունը, սակայն, նա պատասխանատու չէ ոչինչի համար: Մեղավոր են «հասարակությունը», «պետությունը»: Կերպարը զուրկ է «սեանկարից»: Մրջնանոցը «հասարակությունն» է (համատարած անտարբերություն, խլություն, կուրություն, համրություն, «բարոյական անկումն է ավելի մահաբեր»): «... Փրկվել այս մրջնանոցից, մարդ մնալ, մրջյունները որեւէ մեկին չեն հանդուրժում, որը մրջյուն չի...»: «Աշխարհում մրջյունների իշխանությունն է զտարյուն մարդկանց վրա», «Մենք տնվոր ենք մրջյունների տանը, որ այս աշխարհն է»: «Կռվիր քո դեմ, որ մրջյուն չդառնաս»,- ընդվզում է Սահակի ենթագիտակցությունը: Նա ինքնայրումով փրկում է իր ես-ը:

Զոհողություն՝ անհատականությունը փրկելու համար, երբ մրջյունները թափանցել են մարդու հոգու եւ արյան մեջ («Մրջյունները մահ չունեն, մահը մերն է», «... ամբոխը հավերժական է»): Սահակի ընկալումը գոռեսկային է, որը տվյալ պարագայում միակ ձեւն է դիմազուրկ հասարակության դիմազուրկ «լիդերին» ներկայացնելու համար: Ի լրումն այս ամենի, գրողն անցնում է հոգեվերլուծական ուղիղ ու անթաքույց բնութագրումների՝ «Նա ամեն ինչ է եւ ոչինչ, ամեն տեղ ու ոչ մի տեղ՝ մարդկային մի տեսակ, որը բարձրանում-նստում է բոլոր բանկիրների ու փիլիսոփաների գլխին եւ նրանց դատում ու բանտարկում, եթե նույնիսկ բացարձակապես անմեղ են»: Ն. Ադալյանը ուրվագծված խառնածին կերպարում տեսնում է մեր ժամանակակցին: Ամբոխի այդ ներկայացուցիչը դարձել է մարդակերպ: Ամբոխացած հասարակությունը իր անդիմությունը (իմա՝ հոգեզրկությունը) թաքցնում է ընդհանուր, միասնական գործողության թողած տպավորության մեջ, այնինչ նման միասնության արդյունքը հենց խառնածնությունն է կամ ինքը՝ անհատականության բացառումը: Թեեւ Սահակն ու Անահիտն էլ կարող են միանալ իրար, կերպավորվել որպես մեկ անհատականություն (երկուսն էլ ապրում են կյանքի «ավելի միայնակ» տարբերակ), սակայն այդ վիճակում անգամ (երկուս կամ մեկ) ընդհանուր դիմակի տակ տեղ չունեն: Նրանք գիտակցականությամբ հակադրվում են «մրջնային բնազդին», որը եւ ամբոխային դիմակի արարիչն է: Այդ դիմակից է անհատականության հոգու մեջ նայում «մրջնաչքը»: Երբ ձեւավորվում է ամբոխի միասնական դիմակը, գալիս են հավատարմության ժամանակները (կոլեկտիվ ենթագիտակցականը խժռում է անհատական ենթագիտակցականն ու գիտակցականը: Եվ այս դեպքում է Դիմակը պատռուս):

Նորայր Ադալյանը, այո՛, որոշակիորեն առաջնորդվում է անհատական եւ կոլեկտիվ ենթագիտակցականի տեսություններով, որոնք սնում են վերակերպավորումները, մարդ-մարդիկ-հասարակություն ընկալման շրջադարձերը:

Գրքում քիչ չեն հոգեվերլուծական տպավորիչ պատկերավորումները, ասենք, «Սահակը սարսափեց. ինքն էլ ամեն քայլափոխի հետեւում է մրջյուններին, ինչպես նրանք իրեն. մի՞թե ես, անգիտակցորեն ու հակառակ իմ կամքի, ասիճանաբար մրջնանում եմ»:

Ամբոխի հավատարմությունը վերում գերազանցում է բոլոր պատկերացումները:

«Զրոյական մրջնային հոգին» քայքայում է կյանքը, մարդուն զրկում երջանկություն եւ դրամա ապրելու հնարավորությունից: Վիպական ամբողջ տեքստում կյանքը ներկայացվում է «ողբերգական-աբսուրդկատակերգական» չափումներում:

Արդի վերջի գեղագիտությունն Ադալյանին հնարավորություն է տվել փիլիսոփայականը ներկայացնել նաեւ «ձեւակերպումների» տեսքով (գեղարվեստական տեքստը հատվում է «տեսական հիմնավորումներով»):

«Ես հոգի ունեմ, իսկ մրջյունը՝ ոչ». սա է գրքի հիմնամիտը: Այն հանուն հոգու մարտահրավեր է՝ նետված ամբոխացած հասարակությանը: Հոգին կորսվել է, այն պետք է վերականգնվի, հետ խլվի մրջյուններից: Մեռյալի ճակատին դրոշմվում է Աստծո նշանը: Բայց այն որեւէ բան խորհրդանշո՞ւմ է, երբ բլուրը, որտեղ թաղված է Սահակը, վերածվում է մրջնաբլուրի, որտեղ էլ գերեզմանին հայտնվի «երկնագույն մի կակտուս»: Անպատասխան է մնում գրքի հարցումը՝ մարդկությունը դուրս կգա՞ ամենամեծ մեքենաֆորի խորից: Գուցե այս անպատասխան հարցման մեջ է պատասխանը:

ՆՈՐԱՅՐ ԴԱՎԱՐՅԱՆ

Հենրիկ Մամյանը եւ գիրքը

Նկարիչ Հենրիկ Մամյանը հայ գրքի հրատարակչական ոլորտում մեծ ներդրում ունի: Հայ գրականություն է մտել իր նկարչական ուրույն ձեռագրով ու վարպետությամբ: Ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ: Ձեւավորել ու նկարազարդել է ավելի քան 500 գիրք՝ այդ թվում Ղազարոս Աղայանի «Անահիտը», Լեւոն Շանթի «Հին աստվածները», Գեւորգ Դեւրիկյանի «Տրդատ ճարտարապետը», Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված»:

Երեկ Ազգային գրադարանում տեղի ունեցավ Հ. Մամյանին նվիրված ցուցահանդես:

Ավելի քան 10 տարի է, Հենրիկ Մամյանն աշխատում է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգություն» պոեմի ձեւավորման վրա: Նշում է, թե չափազանց դժվար է ներկայացնել աստծո ընդվզումները, ոգու բաբախումները, հանդարտությունն ու հոգեկան հանգստությունը:

«Ձեւավորող գիրքը կյանք է: Գրքերից շատերի ձեւավորման վրա աշխատել եմ ավելի քան 10 տարի: Արդեն տասնվեց տարի աշխատում եմ «Նարեկի» ձեւավորման վրա: Բարդ աշխատանք է եւ հավասարազոր է կյանքի: Ճիշտ ձեւավորման համար պետք է մտնել գրքի իմաստի մեջ, ժամանակ չխնայել ու համառորեն աշխատել»:

Հ. Հ.

Գրքի շնորհանդես Ազգային գրադարանում

Երեկ Ազգային գրադարանի մատենագիտության բաժնում տեղի ունեցավ «Հայ գիրքը 1901-1920 թթ.-ին» մատենագիտության շնորհանդեսը:

Սա հայ գրքի մատենագիտության չորրորդ հատորն է, որ ներառված է նախախորհրդային շրջանի՝ 1901-1920 թթ.-ի պատմությունը: Մատենագիտության առաջին հատորը լույս է տեսել 1982-ին ու պատմում է 1512-1800 թթ.-ի իրադարձությունները:

«Գրքի լույս ընծայումը երեւույթ է: Նմանատիպ գրքեր հազվագյուտ են տպագրվում: Այսպիսի գրքեր կոլեկտիվ ուժերով են ստեղծվում: Շնորհակալ ներդրում է հայագիտության եւ հայոց պատմության տարածման գործում: Այս գիրքը համարում եմ գրադարան մի գրքում՝ լի բազմակողմանի պատմություններով», ասաց գրքի խմբագիր Բախտիար Հովակիմյանը:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՅՈՒՅԱՍԱՓԱՇԵՐՈՒՄ

Ձեւերի տեսողական երաժշտություն

Հայր Հարություն Պզտիկյանի ցուցահանդեսում

«Իր վրձինը այնքան հին է, որքան նոր, իր ազգին նման, այնքան խորհրդանշական է, որքան սուզուտղ կեանքին մէջ. գոյութենական փառը երգելու կերդ մըն է, ուրախութիւնը փնտռելու եւ անոր իմաստ մը տալու: Իր արուեստը ունի դիտելու կարողություն մը, որ հազուագիւտ է մեր օրերուն: Ունի ձգողական ոյժ, ճշտումներ եւ վիճաբանութիւններ յառաջացնելու կարողութիւն. այդ պատճառով իր ցուցահանդեսը արդէն իսկ յաջողութիւն մըն է, որվհետեւ կը խռովէ ընդունած տեսակէտներու ըմբռնումը» (Մարիո Սքեֆանի, Վենետիկ, Il Gazzettino), կարդում ենք օրերս «Մոսկվայի մշակույթի տանը» կազմակերպված Մխիթարյան միաբանության վարդապետ Հարություն Պզտիկյանի նկարչական աշխատանքների երեւանյան ցուցահանդեսի առիթով տպագրված պատկերագրքում: Թերեւս նա ամենից հանրածանոթ սփյուռքահայ մտավորականն է Հայաստանում: Կյանքի, մարդկային հոգսի դիտարկումների իր «Հայաստանյան պատկերներ» գրքաշարով, հայ հոգեւոր ճարտարապետությանը նվիրված բացառիկ ֆիլմաշարով նա վայելում է հայաստանաբնակ թե՛ պարզ մարդու, թե՛ մտավորականության համակրանքը:

«Մոսկվայի մշակույթի տան» ցուցահանդեսը բազմամարդությամբ եւ մտավորականության տարաբերությամբ աննախադեպ էր: Կենտրոնի՝ ժամանակակից կառույցներին բնորոշ ինտերիերը նախատահային բաց տարածության ու կանաչի տրամադրող միջավայրով արդեն իսկ տոնական զգացողության նախապայմաններից մեկն էր: Երեւանյան հոգնած ու մաշված ցուցահանդեսային բացումներից շատ տարբեր այս ներկայացումը թարմության շունչ բերեց. մի քանի համառոտ ելույթներ՝ կենտրոնի տնօրեն Արթուր Սարգսյանի, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի եւ նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանի, երկու ուսանողուհիների օտարալեզու կարճ արվեստաբանական բնորոշումներ, Երեւանի օպերային թատրոնի մենեջերուհի Մագդա Մկրտչյանի գեղեցիկ երգեցողություն, ապա նորաբաց ընդարձակ ցուցասրահում Հ. Պզտիկյանի վեց տասնյակից ավելի աշխատանքների դիտում:

Մտքի, գաղափարի, հոգեւոր կյանքի ու արվեստի ոլորտներում ապրող մարդու ներքին կենսագրության գունարտահայտություն, բազմատոնայնություն մեկ ընդհանուր ենթատեքստով, նկարչական խառը տեխնիկայի ինքնահնար կիրառություններ՝ Մուրանոյի բյուրեղապակյա փոքու իր սացած ներկերից, սոսնձի, ջնարակի, նավթի տարրալուծ խառնուդից սկսած, կոլաժային մոտեցումներ, լուսանկարչական արվեստի տարրերի ճաշակավոր համադրություն: Ֆիգուրատիվ եւ աբստրակտ գունագծային մակերեսները հարմոնիկ մեղեդայնություն են ներշնչում, խորհում ստեղ-ստեղ տագնապ ու խոհ, ներքին խոկումներից ծնված կյանք արարող լույսի ողողանքներ: Այստեղ եւ լաբիրինթոս կա, իբրեւ մարդկային բազմաբյուր խճճանցերի լուծ կամքն ու զրուցակիցը: Հաճախ էր հանդիպում նրանց ստուդիաներում, պատկերասրահներում, մասնակցում զրույց-քննարկումներին: Եվ երբ Պիկասոն մի օր նրան հարցնում է՝ թե արվեստի ու իմաստասիրության մասին, երբ այսպես խոսում ես, ինչո՞ւ չես գծում, ինքը ցույց է տալիս իր գործերը: Ու փարիզյան իր առաջին ցուցահանդեսը Լաստինական թաղամասի «Սյուրյան» ցուցասրահում Մեծն Պիկասոյի հովանավորությամբ է բացվում: Ու մինչ օրս նկարչությունն իր համար ներքնարտահայտության լավագույն միջոցներից մեկն է, ձեւերի շարժում, գույների երաժշտություն:

Երեւանյան ցուցադրության բազմաձայն խուլ աղմուկի մեջ դժվար չէր գտնել արդի հայ գեղանկարչության վարպետի՝ Հակոբ Հակոբյանի մշտապես իրատեսական եւ վսահելի խոսքը. «Չենք կարող անտարբեր անցնել իր նկարներու կողքով: Իսկապես իր նկարներու մեջը կա այն ոգեւորությունը, կրակը, եռանդը, որ իրեն հատուկ է: Որովհետեւ ինքը ոչ միայն նկարիչ է, այլ նաեւ բացառիկ հայ մարդ է: Մեկը, որ այդչափ լավ հայերեն է խոսում, ինձի համար դրվում է ամենաբարձր ասիճանի վրա: Մեր մշակույթը՝ հին եւ նոր, մեր եկեղեցու, մեր ժողովուրդի պատմությունը սքանչելի գիտե: Կարծում եմ, որ հայության բացառիկ ներկայացուցիչներեն մեկն է, իբրեւ հայ մարդ մեծ գործ է անում Հայաստանի, մեր պատմության, մեր մշակույթի համար: Եվ կարող է ավելին անել, որովհետեւ ինքը լի է մեծ ուժով ու պատարով: Իր մասին միայն լավ բան կարող եմ ասել, սովորական մեկը չէ, բացառիկ անձնավորություն մըն է: Շատ ուրախ եմ, որ բացվեց այս ցուցահանդեսը, ուշադրությամբ հետեւում եմ իր հոդվածներուն, որոնք շատ մեծ արժեք ունեն ուսուցողական եւ մեր ժողովուրդին դաստիարակության իմաստով»:



ՄԵԼՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ամերիկացու նյարդերը տեղի տվեցին

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, նոյեմբերի 30-ին մայրաքաղաքի «Դինամո» մարզադահլիճում տեղի կունենա դրմենդ ֆուլ կոնտակտ կարատեի պրոֆեսիոնալ լիգայի գավաթի խաղարկությունը: Քաջային 5 կարգերում մրցավեճի կբռնվեն Հայաստանի եւ աշխարհի հավաքականները: Կանցկացվի 5 ռաունդանոց 5 մենամարտ:

Երեկ «Արմենիա մարիոթ» հյուրանոցում տեղի ունեցավ մրցակիցների հանդիպումը: Հայաստան էին ժամանել բելառուսցի Արթուր Յանչենկոն, ռուսաստանցի Արսյոմ Շարաբկինը, կանադացի Ֆրեդ Հերիսը եւ ամերիկացի Ջերարդ Փիփլը: Ուկրաինացի Դմիտրի Բոգաչովը երեւան պետք է ժամաներ մի փոքր ուշ:

Հայաստանի հավաքականն այդ մրցումներում կներկայացնեն Յուրի Բաղյանը (60 կգ), Նորայր Ավետիսյանը (63 կգ), Կառլեն Մինասյանը (68 կգ), Արամ Մեհրաբյանը (70 կգ) եւ Երիկ Օհանյանը (85 կգ): Ներկաներին ողջունեցին դրմենդ ֆուլ կոնտակտ կարատեի ֆեդերացիայի նախագահ Հայկ Վարդանյանը, փոխնախագահ Կարեն Հարությունյանը, մրցումների գլխավոր մրցավար Լեւոն Խաչատրյանը: Այնուհետեւ մարզիկները հակիրճ ներկայացրին իրենց նվաճումները: Սկսենք հյուրերից:

Արթուր Յանչենկոն Բելառուսի փոխչեմպիոնն է, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն մութայբոխինգից: **Արսյոմ Շարաբկինը** 20-ից ավելի միջազգային մրցաշարերի հաղթող է: **Ֆեյն Հերիսը** Կանադայի բռնցքամարտի չեմպիոնն է, ուժեղագույնն է ճանաչվել նաեւ մութայբոխինգում, միջազգային մրցաշարերի հաղթող է: **Ջերարդ Փիփլը** ԱՄՆ-ի եւ Կալիֆորնիայի նահանգի չեմպիոն է, միջազգային մրցաշարերի մասնակից:

Ներկայացնենք մեր մարզիկներին:

Յուրի Բաղյան- ՀՀ չեմպիոն, պրոֆեսիոնալ լիգայի քառակի չեմպիոն, մի շարք մրցաշարերի հաղթող:

Նորայր Ավետիսյան-աշխարհի եռակի չեմպիոն, ԱՊՀ գավաթակիր, Հայաստանի պրոֆեսիոնալ լիգայի բացարձակ չեմպիոն:

Արամ Մեհրաբյան-ՀՀ չեմպիոն, Հայաստանի պրոֆեսիոնալ լիգայի չեմպիոն, միջազգային մրցաշարերի հաղթող:

Կառլեն Մինասյան-աշխարհի եւ ԱՊՀ-ի չեմպիոն, Կովկասյան մրցաշարի եռակի հաղթող, պրոֆեսիոնալ լիգայի չեմպիոն:

Երիկ Օհանյան-ՀՀ չեմպիոն, ԱՄՆ-ի միջազգային մրցաշարի հաղթող:

Այնուհետեւ հանդիպման կազմակերպիչների առաջարկով առաջիկա մրցման զույգերն առանձին լուսանկարվեցին մարտական տարբեր դիրքերով: Այդ ժամանակ մի փոքր միջադեպ տեղի ունեցավ Երիկ Օհանյանի եւ ամերիկացի Ջերարդ Փիփլի միջեւ: Վերջինիս նյարդերը տեղի տվեցին, երբ Երիկը դիպավ նրան: Լավ էր, որ միջադեպը կարճ տեւեց եւ ծագած կոնֆլիկտը հարթվեց, մրցակիցները միմյանց ձեռք սեղմեցին: Անշուշտ, նրանց մենամարտը մեծ անհամբերությամբ է սպասվում:

Սամվել Տեր-Սահակյանի հնարավորությունները գերադասելի են

Վերջնագծին է մոտենում Անթալիայում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունը: Ավարտական տուրից առաջ մրցանակակիր դառնալու հնարավորություններ են պահպանում Տիգրան Հարությունյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Ավետիք Գրիգորյանն ու Հրանտ Մելքումյանը:

Նշված քառյակից ամենալավ հնարավորությունն ունի Սամվել Տեր-Սահակյանը: Մինչեւ 14 տարեկանների մրցաշարում Սամվելը 10-րդ տուրում սեւերով հաղթեց Գուջրաթի Սանթոսին եւ վաստակեց 8 միավոր: Նա կես միավորով է զիջում ադյուտանտը գլխավորող չին շախմատիստ Չեն Վանգին: 8-ական միավոր ունեն նաեւ Սանան Սյուգիրովը եւ Մարսել Կանարեկը: Հենց վերջինիս հետ էլ Տեր-Սահակյանը կմրցի ավարտական տուրում: Այս խմբում հանդես եկող մեր մյուս երկու շախմատիստները՝ Ռոբերտ Աղասարյանն ու Վահե Բաղդասարյանը վաստակել են 6-ական միավոր:

Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում Ավետիք Գրիգորյանն ու Հրանտ Մելքումյանը 7-ական միավոր ունեն: Նրանք Իվան Պոպովից ու Ռոման Էդուարդից հետ են մնում մեկ միավորով: Մրցանակակիր դառնալու լավ հնարավորություն ունի ռուսաստանցի Պողոս Նահապետյանը, որը վաստակել է 7,5 միավոր: Նա ավարտական տուրում խաղալու է Ռոման Էդուարդի հետ, իսկ ահա Ավետիք Գրիգորյանն անհաջողության մատնվեց Էդուարդի հետ մրցավեճում: Ավարտական տուրում մեր շախմատիստները խաղալու են սպիտակներով: Ավետիք Գրիգորյանի մրցակիցը կլինի Սեմեսեյ Տոլոգոնսեգինը, իսկ Մելքումյանը կխաղա Ռոլանդ Պրոտիջերսի հետ:

Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում Տիգրան Հարությունյանը հաղթելով Օլեգ Արսյոմենկոյին, վաստակեց 7,5 միավոր: Ինչ խոսք, մրցանակակիր դառնալու նրա հնարավորություններն ավելի նվազագույն են, քանի որ առաջատարը վաստակել է 9,5 միավոր: Նման ցուցանիշ ունի չինացի Սեն Վանգ Տոնգը: 8,5 միավորով 2-րդ տեղում է Միխայիլ Անտիպովը, իսկ Բաջաջ Պրինցեն ունի 8 միավոր:

Եվս չորս թիմեր ուղեգիր նվաճեցին

Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 5-րդ տուրն անվանեց 1/8 եզրափակիչի եւս չորս մասնակցի: «Բարսելոնը», «Ռոման», «Ինտերն» ու «Սեւիլիան» միացան նախորդ տուրում ուղեգիր նվաճած «Մանչեսթր Յունայթեդին» ու «Արսենալին»:

«Լիոնի» հետ արտագնա խաղում «Բարսելոնին» ընդամենը մեկ միավոր էր անհրաժեշտ հաջորդ փուլ դուրս գալու համար: Եվ իսպանացիներին դա հաջողվեց: Խաղի ընթացքում նրանք երկու անգամ հավասարեցրին առաջատարությունը, բայց ի վերջո «Լիոնը» 11 մ հարվածով հավասարեցրեց հաշիվը: Նույն խմբում «Շտուտգարտը» սեփական հարկի տակ 3-2 հաշվով պարտության մատնեց «Գալաթասարային»: Հաղթական գոլը 85-րդ րոպեին խփեց Մարիկան: Այժմ «Ե» խմբից 2-րդ ուղեգիր բախտը կվճռվի դեկտեմբերի 12-ին Գալաթասարայում, դաշտի տերերի եւ «Լիոնի» մրցավեճում: Երկու թիմերն էլ վաստակել են 7-ական միավոր:

Թիմերի մարզիչները խաղից հետո հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Ֆրանկ Ռայկարդ («Բարսելոն»)-Մենք ավելի լավ էինք խաղում, քան «Լիոնը»: Մենք ավելի մոտ էինք հաղթանակին: Սակայն կարեւորն այն է, որ հաջորդ փուլ մտանք՝ խմբում գրավելով առաջին տեղը: «Լիոնը» լավ հնարավորություն ունի ուղեգիր նվաճելու Գալաթասարայում:

Ալեն Պերեն («Լիոն»)-Վրդովված եմ ֆուտբոլիստների համար, որոնք կարող էին հաղթել: Այդ դեպքում վերջին խաղում մեր խնդիրն ավելի դյուրին կլիներ: Իսկ այժմ շոտլանդացիները մեր հետ խաղում մեծ ուշադրություն կդարձնեն պաշտպանությանը, քանի որ ոչ-ոքին նրանց ձեռնտու չէ: Պետք է լրջորեն վերաբերվենք մրցակցի հակագրոհներին: Վեմ մրցակցի հակագրոհներին: «Բարսելոնը» մեզ գերազանցում էր տեխնիկապես, ուստի շատ դժվար էր այդ թիմից միավոր վաստակելը:

«Ռոմայի» ֆուտբոլիստներին ուղեգիրը հեշտությամբ տրվեց: Նրանք գիրը հեշտությամբ տրվեց: Նրանք Կիեւում 4-1 հաշվով ջախջախեցին Կիեւում 4-1 հաշվով ջախջախեցին դինամոյականներին: Այդ տեղի դինամոյականներին հաղթանակի շնորհիվ «Ռոման» վաստակեց 10 միավոր եւ մտավ հաջորդ փուլ: Թիմերի մարզիչները խաղի հետեւյալ գնահատականը տվեցին:

Լուչանո Սպալետտի («Ռոմա»)-Այսօր սաներս այնքան լավ խաղացին, որ արժանի էին խմբի հաղթող ճանաչվել: Կարեւորն այն է, որ առաջին գոլը: Կարեւորն այն է, որ այսօր լավ խաղացինք ու անհրաժեշտ արդյունքի հասանք: «Մանչեսթր Յունայթեդի» հետ հանդիպումը հեշտ չի լինի: Այդ խաղում պետք է պայքարենք մեր պատվի համար:

Օլեգ Լուժնի («Դինամո»)-Մենք պարտվեցինք, քանի որ առաջին իսկ րոպեներից մեր ֆուտբոլիստներին պակասում էր կենտրոնացումը, նաեւ պաշտպանությունում անհաջող խաղացինք: Ուկրաինայի առաջնության մակարդակից բարձր աստիճանի հասնել չի հաջողվում:

«Բ» խմբում կայացած մյուս խաղում «Մանչեսթր Յունայթեդը» սեփական հարկի տակ դժվարին հաղթանակ տարավ «Սպորտինգի» նկատմամբ (2-1): Այդ խաղի 21-րդ րոպեին հյուրերը բացեցին հաշիվը: Միայն 61-րդ րոպեին Տեւեսին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Իսկ թիմի հաղթանակն ավելացված ժամանակում առահովեց Քրիսթիանու Ռոնալդոյի խփած գոլը:

«Ինտերը» եւս ժամկետից շուտ ուղեգիր նվաճեց՝ սեփական հարկի տակ 3-0 հաշվով հաղթելով «Ֆեներբախչեին»: Կրկին անհաջող խաղաց ԲԿՄԱ-ն՝ Մոսկվայում 0-1 հաշվով պարտվելով «Էյնդհովենին»: ԲԿՄԱ-ն նույնիսկ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության ուղեգիր չկարողացավ նվաճել՝ եզրափակելով «Գ» խմբի աղյուսակը:

«Հ» խմբից պայքարը կշարունակի ՈՒԵՖԱ-ի գավաթակիր «Սեւիլիան»: Իսպանացիները սեփական հարկի տակ առավելության հասան «Արսենալի» նկատմամբ (3-1): Վերջինս առաջին պարտությունը կրեց: «Սյլաուա»-«Սլավիա» խաղում գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1:

ՀԱՄԱՌՈՏ

Արոնյանը մտավ հաջորդ փուլ

Խանտի Մանսիյսկում ընթացող շախմատի աշխարհի գավաթի խաղարկությունում հերթական փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարեց Լեւոն Արոնյանը: Նա երկրորդ պարտիայում ոչ-ոքի խաղաց Յան Գոնտաֆսոնի հետ եւ մրցախաղը շահեց 1,5-0,5 հաշվով:

Կլինսմանի երազանքը

Գերմանիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Յուրգեն Կլինսմանը խոստովանել է, որ կցանկանար սանձնել Անգլիայի ընտրանու ղեկը: Ըստ Կլինսմանի, յուրաքանչյուր մարզչի համար էլ մեծ պատիվ է Անգլիայի հավաքականը գլխավորելը: Դուրբանում կայացած վիճակահանության ժամանակ Ֆրանց Բեկենբաուերը հանդիպել է Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ջեֆ Թոմփսոնի հետ եւ նրան տեղեկացրել է Կլինսմանի ցանկության մասին:

Մոդանոն ամերիկացի ամենաարդյունավետ հոկեյիստն է

«Դալասի» կենտրոնական հարձակվող Մայք Մոդանոն հոկեյի ազգային լիգայի առաջնության հերթական խաղում խփելով 2 գոլ, դարձավ ամենաարդյունավետ ամերիկացի հոկեյիստը: 37-ամյա Մոդանոն հոկեյի ազգային լիգայի առաջնություններում անցկացրած 1253 խաղում խփել է 511 տափօղակ, դարձել 722 գոլային փոխանցման հեղինակ՝ վաստակելով 1233 միավոր: Նախկին ռեկորդը պատկանում էր Ֆիլ Խաուլիին (1232 միավոր):

Պելեին 3-րդ ոսկե մեդալը կհանձնվի

Ինչպես հայտարարել է ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլատերը, 122 նախկին ֆուտբոլիստների, որոնց թվում է եւ Պելեն, կհանձնվեն աշխարհի առաջնության ոսկե մեդալներ: Նրանք այն ֆուտբոլիստներն են, ովքեր 1930-1974-ի աշխարհի առաջնություններում ընդգրկված են եղել չեմպիոնի տիտղոսը նվաճած հավաքականի կազմում, սակայն կամ ընդհանրապես խաղադաշտ դուրս չեն եկել, կամ էլ եզրափակիչ խաղին չեն մասնակցել: Նախկինում գործող կարգի համաձայն, աշխարհի նշված առաջնություններում մեդալներ էին սանում միայն եզրափակիչ կամ 3-րդ տեղի համար մրցախաղերին մասնակցած ֆուտբոլիստները:

Բրազիլացի Պելեն թեեւ մասնակցել էր Չիլիում 1962-ին կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնությանը, սակայն վնասվածքի պատճառով հանդես չէր եկել եզրափակիչ խաղում: Բրազիլիայի ընտրանին վճռորոշ խաղում հաղթելով Չեխոսլովակիայի հավաքականին, դարձել էր աշխարհի չեմպիոն: Բրազիլացիների կազմում ոսկե մեդալներ էին ստացել միայն եզրափակիչ խաղի մասնակիցները: Այնպես որ Պելեն իր 3-րդ ոսկե մեդալը կստանա:

Կրկին Մարիա Շարապովան

Մարիա Շարապովան երրորդ տարին անընդմեջ գլխավորեց ռուսաստանցի ամենահարուստ մարզիկների ցանկը, որը հրապարակել է «Ֆինանս» ամսագիրը: Ցանկում տեղ են գտնում զբաղեցրել տարեկան 1 մլն դոլարից ավելի եկամուտ ունեցող մարզիկները: 20-ամյա Մարիա Շարապովան 2007-ին վաստակել է 25 մլն դոլար: Երկրորդ տեղում «Յուսա Ջազի» բասկետբոլիստ Անդրեյ Կիրիլենկոն է (13,7 մլն դոլար): Լավագույն եռյակը եզրափակում է հոկեյի ազգային լիգայի «Չիկագո» թիմի դարպասապահ Նիկոլայ Խաբիբուլինը (6,8 մլն դոլար): Ընդհանուր առմամբ, ռուսաստանցի ամենահարուստ 50 մարզիկների ցանկում ընդգրկված են հոկեյի ազգային լիգայում հանդես եկող 35 հոկեյիստներ:

6 ֆուտբոլիստներից ամենահարուստը «Զենիթի» խաղացող Անդրեյ Արշավինն է, որը 3,7 մլն դոլարով զբաղեցնում է 16-րդ հորիզոնականը: Մյուս ֆուտբոլիստների ցուցանիշներն այսպիսին են՝ Սերգեյ Իգնաշեւիչ (ԲԿՄԱ, 2 մլն, 36-րդ տեղ), Ալեքսանդր Կերժակով («Սեւիլիա», 2 մլն, 37-րդ տեղ), Եգոր Տիտով («Սպարտակ», 2 մլն, 39-րդ տեղ), Պավել Պոգրեբնյակ («Զենիթ», 1,8 մլն, 41-րդ տեղ), Ալեքսեյ Սմերտին («Ֆուլհեմ», 1,5 մլն, 47-րդ տեղ):

Բացի Շարապովայից, ցուցակում տեղ են գտնում երեք թենիսիստներ՝ Սվետլանա Կուզնեցովան (2,3 մլն, 29-րդ տեղ), Նիկոլայ Դավիդենկոն (2,1 մլն, 32-րդ տեղ) եւ Աննա Չակվետաձեն (1,4 մլն, 50-րդ տեղ): Բասկետբոլիստներից Անդրեյ Կիրիլենկոյին ընկերակցում են Ջոն Ռոբերտ Հոլդենը ԲԿՄԱ-ից (2,2 մլն, 30-րդ տեղ) եւ «Չիկագո Բուլզի» խաղացող Վիկտոր Խրյապան (1,9 մլն, 40-րդ տեղ): Բռնցքամարտը ցուցակում ներկայացնում են Սուլթան Իբրահիմովը (4 մլն, 13-րդ տեղ) եւ Նիկոլայ Վալուեւը (2,5 մլն, 25-րդ տեղ):

Մարզիկների եկամուտը հաշվարկելիս հաշվի են առնվել ըստ պայմանագրերի նրանց տարեկան աշխատավարձերը եւ գովազդից ստացված գումարները:

Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը նոյեմբերի 27-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը, հաստատեց ՀՀ ԿԲ 2007-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունը եւ ՀՀ ԿԲ 2007թ. երրորդ եռամսյակի ծախսերի նախահաշվի եւ կապիտալ ներդրումների ծրագրի կատարողականը:

Խորհուրդը որոշեց փոփոխություններ եւ լրացումներ կատարել «Արժութային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման եւ հայտարարագրման» կարգում, «2008-2009թթ. Հայաստանի Հանրապետության հուշադրամների թողարկման ծրագրում», «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման եւ վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության» կարգում:

Խորհրդի որոշմամբ վերակազմավորվող Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունը վերագրանցվեց որպես «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ, իսկ վերակազմավորվող Հայաստանի ֆոնդային բորսա ինքնակարգավորվող կազմակերպությունը՝ որպես «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ:

Հաստատվեցին «Էկոմենիկ Եկեղեցական Փոխադարձական Ֆոնդ» ՈՒԿԿ ՍՊԸ-ի երեւանի, Եղեգնաձորի, Ստեփանավանի ներկայացուցչությունները: Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու թիվ 565, թիվ 542 եւ թիվ 284/1 լիցենզիաները, ինչպես նաեւ «Մանի Լենդ» ՍՊԸ գրավաճառ, «Արթաղ» ՍՊԸ գրավաճառ լիցենզիաները եւ «Ֆիրմա Ալբերտ-2» ՍՊԸ-ի գրավաճառ կազմակերպման ԳԳ-Ե 073 լիցենզիան ուժը կորցրած ճանաչվեցին:

Խորհուրդը որոշեց հրատարակել ՀՀ ԿԲ «Բանբեր» պարբերականի 2007-ի երրորդ եռամսյակի թողարկումը:

ԿԲ մամուլի ծառայություն

ԱԶԳ

Հայտարարություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-07/60» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ մշակույթի նախարարության՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ձայնային սարքավորումների եւ դրանց անհրաժեշտ մոնտաժային պարագաների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Արդբիզնինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ 247230066158 Հ/Հ -ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, 108 սենյակ հեռ.՝ 28-93-25, Հ. Այունցին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ն:

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-07/61» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կարիքների համար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Արդբիզնինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ-ի N 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Ա. Մարգարյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ն:

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/328 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար Մարտունու թիվ 2 միջ. դպրոցի մարզադահլիճի նորոգման աշխատանքների իրականացման նպատակով:**

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 900 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 2893-27 հանձնաժողովի քարտուղար Ս. Գետրգյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը ժամը 14.30-ն:

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/329 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար Սարուխանի կիսակառույց խորհային հորի ավարտման աշխատանքների իրականացման նպատակով:**

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 2000 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 2893-27 հանձնաժողովի քարտուղար Ս. Գետրգյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը ժամը 15.00-ն:

ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ
ԵՐԿՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

մասնակցեք մեր ընտրությանը
ընտրենք Դաշնակցության թեկնածուին

Հարգելի՛ հայրենակիցներ

2008-ի փետրվարին տեղի կունենան ՀՀ նախագահական ընտրություններ:

ՀՅ Դաշնակցությունը այդ ընտրություններին կմասնակցի սեփական թեկնածուով:

Դիմում ենք ձեզ հետեւյալ առաջարկով.

միասին որոշենք, թե ով պետք է լինի Դաշնակցության թեկնածուն:

Ձեր խոսքը, որոշումը, քվեն կարեւոր են մեզ համար:

Առաջիկա օրերին հանրապետության բոլոր մարզերում եւ Երեւանում տեղակայված քվեակետերում, ինչպես նաեւ շրջիկ քվեատուփերում դուք հնարավորություն կունենաք հայտնելու ձեր տեսակետը, կատարելու ընտրություն մեր թեկնածուների միջեւ:

Վահան Հովհաննիսյան, թե՛ Արմեն Ռուսամյան

Որոշում ենք դուք, ընտրությունը ձերն է:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տեսչությունների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է «Դալլարուսկոյի» ՓԲԸ-ը Նորաքեւ գետից 150 կմ/կմ հեղեղատի աշխատանքի համար Տաշիր համայնքի խմելու ջրով ապահովելու նպատակով ջրառի ջրագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական ստացմանը, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տեսչությունների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական ստացման լսումը տեղի կունենա 2007 թ. դեկտեմբերի 5-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային տեսչությունների կառավարման գործակալություն

Հայտարարություն

Դեկտեմբերի 3-ին, ժամը 14-ին **ՀՀ բնապահպանության նախարարությունը, «Ֆեր-Ռուբ» ՍՊԸ, Լոռու մարզի Քարաքեղի գյուղապետարանը** կազմակերպում են հասարակական լսումներ Լոռու մարզի Քարաքեղի համայնքում գտնվող ոսկեֆիլանման գրանիտների հանքավայրի օգտագործման նպատակով: Նախնական փաստաթղթին կարելի է ծանոթանալ Երեւան, Կոմիտասի 29 հասցեում:

VIVAcell
Ձեր ընտրանքը

ՎիվաՍելը խոստանում է եւ կատարում:

Բաժանորդներին հնարավորինս մոտ լինելու եւ վերջիններիս կարիքներին առավել արագ արձագանքելու նպատակով ՎիվաՍելը շարունակում է ընդլայնել իր սպասարկման կենտրոնների ցանցը թե՛ Երեւանում եւ թե՛ Հայաստանի մարզերում: Ներկայումս ՎիվաՍելի սպասարկման կենտրոնների ընդհանուր թիվը հասնում է 66-ի:

ՎիվաՍելի սպասարկման կենտրոնները տեղակայված են հետեւյալ հասցեներով՝ պատրաստ սպասարկելու իրենց հաճախորդներին.

Երեւան

Արգիշտի 4/1
Բագրատունյաց 14
Գայի պողոտա 19/29
Երեբունի 18
Իսահակյան 22
Խուդյակով 212/3
Կիեւյան 11/1
Կոմիտաս 58
ՀԱԹ, Ռաֆֆու 27/1ա
Մարգարյան 19
Ռուբինյանց 14/7
Տիգրան Պետրոսյան 42/2
Տիգրան Մեծի 20
«Ցվարթնոց» օդանավակայան, ժամանման նոր սրահ
«Ցվարթնոց» օդանավակայան, բեռնափոխադրման համալիր

Արագածոտն

ք. Աշտարակ, Նորայր Սիսակյան 41
ք. Ապարան, Մարշալ Բաղրամյան 51
ք. Թալին, Խանջյան 27
գ. Ծաղկահովիտ, Շիրակացու 9/1

Արարատ

ք. Արարատ, Խանջյանի 47/32, առեւտրի սրահ
ք. Արտաշատ, Օգոստոսի 23, 136ա
ք. Մասիս, Առնո Բաբաջանյանի 7/6

Արմավիր

ք. Արմավիր, Հանրապետության 28
ք. Էջմիածին, Բաղրամյանի 4դ
ք. Մեծամոր, թիվ 17ա, թիվ 17 եւ 14 շենքերի միջեւ
գ. Բաղրամյան, Բաղրամյան համայնքի վարչական տարածք

Գեղարքունիք

ք. Գավառ, Բունիաթյան 2
ք. Ճամբարակ, Գ. Նժդեհի 135
ք. Մարտունի, Մյասնիկյան փ.
ք. Սեւան, Սայաթ-Նովա-Սարգիս Սեւանցու փողոցների խաչմերուկ
ք. Վարդենիս, Ռոմանի 12

Լոռի

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 75
ք. Վանաձոր, Գրիգոր Լուսավորչի 53 Ա
ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 3, թիվ 6 բաղվածք
ք. Ալավերդի, Թումանյան փ. ա
ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան փ.
ք. Տաշիր, Կիրովի 216

Կոտայք

ք. Աբովյան, Հաթիսի փողոց
ք. Եղվարդ, Ցարենցի 48
ք. Հրազդան, Միկրոշրջան, Գ-1
ք. Ցարենցավան, Թումանյան փողոց

Շիրակ

ք. Գյումրի, Շահումյան 185
ք. Գյումրի, Պարույր Սեւակի 9
ք. Գյումրի, Սայաթ-Նովա 9/9ա
ք. Արթիկ, Տուֆագործների 39 ա/1
ք. Մարալիկ, Հր. Շահինյանի փողոց
գ. Ամասիա, ավտոկայան
գ. Աշոցք
գ. Ախուրյան

Սյունիք

ք. Գորիս, Մաշտոցի 14
ք. Ագարակ, Ցարենցի փողոց
ք. Կապան, Շահումյան 11
ք. Քաջարան, Լեռնագործների 12
ք. Սիսիան, Որոտանի 1 Ա
ք. Մեղրի, Մելիք Օհանջանյան փողոց, հանրախանութ

Վայոց Ձոր

ք. Եղեգնաձոր, Միկոյան 2
ք. Վայք, Ջերմուկի խճ. թիվ 9 եւ 11 շենքերի հարակից տարածք
ք. Ջերմուկ, Շահումյանի 20

Տավուշ

ք. Իջեւան, Երեւանյան 28
ք. Նոյեմբերյան, Նոյեմբերի 29
ք. Դիլիջան, Մյասնիկյանի 47/2
ք. Բերդ, Մաշտոցի 46
գ. Բագրատաշեն

3 շարժական սպասարկման կենտրոն

Հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել 111 հեռախոսահամարով:

ՁՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԳԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 28.11.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: